

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 18.08.2021թ. չորեքշաբթի թիվ 33 (1006)

## Վերափոխումն Սուրբ Աստվածածնի (Խաղողօրհներ)

**Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման (Խաղողօրհներ)** տոնը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար (գլխավոր) տոներից է, նշվում է օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը: Այս տարի այն նշվեց անցած կիրակի՝ օգոստոսի 15-ին:

**Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելությունից** հետո **Աստվածամայրը**, իր **Որդու** պատգամին հնազանդ (Հովհ. ԺԹ 26-27), շուրջ 15 տարի ապրեց **Հովհաննես** Աստվածաբան առաքյալի խնամատարության ներքո: **Միածին Որդու** համբարձումից հետո **Աստվածամայրը** օրեր ու գիշերներ հարատեւում էր պահքի ու աղոթքի մեջ: Հաճախ այցելում էր **Տիրոջ** թափուր գերեզման եւ ծնկաչոք աղոթում:

**Գողգոթա** կատարած իր այցելություններից մեկի ժամանակ Նրա առջեւ հայտնվում է **Գաբրիել** հրեշտակապետը՝ արմավենու ճյուղը ձեռքին, ու ավետում **Սուրբ Աստվածածնի**՝ երկրային աշխարհից դեպի վերին՝ երկնային **Երուսաղեմ** վերափոխվելու, ինչպես նաեւ դրա ժամանակի մասին: Վերադառնալով տուն՝ **Աստվածածինն** այդ մասին պատմում է Հովհաննեսին, իսկ հետո մյուս առաքյալներին ու ցույց տալիս **Գաբրիել** հրեշտակապետի կողմից տրված արմավենու ճյուղը, որից երկնային լույս էր տարածվում:


Այսպիսով, **Սուրբ Կույսը**, պատրաստվելով երկնային աշխարհի ճանապարհվելուն, պատվիրեց, որ իրեն թաղեն **Գեթսեմանիի** ձորակում: Ապա այդ սենյակում, պառկելով մահճին, մնաց միայնակ: Վերջապես լրացավ այն ժամը, երբ պետք է կատարվեր նրա՝ երկրից երկինք վերափոխումը:

Առաքյալները շրջապատել էին այն զարդարված մահիճը, ուր ընկողմանել էր **Աստվածամայրը**: Հանկարծ շողաց չտեսնված մի լույս: Ներկաները սարսափեցին, երբ սենյակի վերելում ճառագայթների ներքո, հայտնվեց **Հիսուս Քրիստոսը**՝ հրեշտակների ու սրբերի ուղեկցությամբ:

Տեսնելով իր **Որդուն**՝ հրեշտակների գործով շրջապատված, **Աստվածամայրը** թեթևորեն բարձրացավ մահճից, խոնարհվեց **Տիրոջը** եւ հանգիստ, ասես քնի մեջ, հոգին ավանդեց իր **Միածին Որդու** ձեռքը:

**Աստվածամոր** երկրավոր կյանքի վախճանը «**Մեջում**» եւ ոչ թե «**մահ**» բառով է որակվում հասկանալի դարձնելու համար նրա՝ երկինք փոխադրված լինելը:

շարունակությունը՝ էջ 7



## Կառավարություն

### Նոր համալրում՝ բժշկական կադրերով

ՀՀ կառավարության նիստում հաստատվել են 2021/2022 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեռով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրոհնատուրայի (ըստ մասնագիտությունների) եւ ինտերնատուրայի ընդունելության տեղերը:

Որոշման ընդունումը պաշտպանության եւ առողջապահության ոլորտների համար կապահովի բարձր որակավորմամբ անհրաժեշտ բժշկական կադրերի համալրում՝ ըստ համապատասխան մասնագիտությունների:

շարունակությունը՝ էջ 2

## Համակարգ

### Կողմերի հավասար ներկայացվածությամբ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ պետական բուհերի հոգաբարձուների խորհուրդները ձեւավորել միասնական մոտեցմամբ: 20 հոգանոց խորհուրդներում հավասարապես ներկայացված կլինեն ուսանողների, դասախոսական կազմի, հիմնադրի եւ լիազոր մարմնի ներկայացուցիչները:

Բուհերի կառավարման խորհուրդները ներկայումս ձեւավորված են ՀՀ կառավարության՝ 2005 թվականի հունիսի 23-ի 975-Ն որոշմամբ հաստատված կարգով: Ըստ այդմ՝ 16 պետական բուհերում (որոնցից 12-ն ունեն հիմնադրամների, 4-ը՝ ՊՈԱԿ-ի կազմակերպական-իրավական ձեւ), գործում են 24-32 հոգանոց խորհուրդներ, որոնցում յուրաքանչյուր կողմին հատկացված է 25 տոկոս ներկայացվածություն: Դրանց գործունեությունը կարգավորվում է «*Հիմնադրամների մասին*», «*Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին*», «*Կրթության մասին*», «*Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին*» օրենքներով եւ համապատասխան բուհերի՝ հիմնադրի հաստատած կանոնադրություններով:

շարունակությունը՝ էջ 2

## Սերունդ

### ... Որ վերադառնան բնականոն կյանք

Երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը «*ԼոՖթ*» կենտրոնի հետ համատեղ կազմակերպել էր բաց քննարկում՝ երիտասարդների ներուժի, հնարավորությունների եւ հիմնախնդիրների վերաբերյալ:

Քննարկմանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**, նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**, ՄԱԿ-ի մշտական համակարգող **Շոմքի Շարիքը**: Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 150 երիտասարդներ եւ խոսնակ-փորձագետներ:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը շնորհավորել է երիտասարդներին տոնի կապակցությամբ, մաղթել խաղաղ երկինք եւ հզոր երկիր՝ նրանց կոչելով հասարակության ամենագորեղ ուժը, հավատը եւ ապագան:

շարունակությունը՝ էջ 4



Նոր համալրում՝ բժշկական կադրերով

սկզբը՝ էջ 1



Ըստ Կառավարության որոշման ԿԳՄՍ նախարարությանը հասկացվել է կլինիկական օրգինատուրայի 10, Առողջապահության նախարարությանը՝ 58, Արցախի Զանրապետությանը՝ 17, Պաշտպանության նախարարությանը՝ 10 ընդունելության տեղ: ՊՆ-ին հատկացվել է նաև ինտերնատուրայի 67 ընդունելության տեղ:

Վերոնշյալ թվաքանակները ձեռնարկվել են հիմք ընդունելով Երեւանի Մ. Գրեգորու անվան պետական բժշկական համալսարանում, ինչպես նաև միջպետական եւ միջգերատեսչական պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետությունների բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառությունը ավարտող, 2021 թվականի ամառային գորակրջի ընթացքում գորակրջում ենթակա եւ ԳԳ պաշտպանության նախարարության պատվերով ԵՊԲԳ-ի ինտերնատուրա 1 տարի ժամկետով ուսումնառության գործուղվելու ցանկություն հայտնած քաղաքացիների թիվը:

Արցախի Զանրապետությունը, ԳԳ առողջապահության նախարարությունը եւ Երեւանի Մ. Գրեգորու անվան պետական բժշկական համալսարանը ներկայացրել են առկա ուսուցմամբ կլինիկական օրգինատուրայի, իսկ ԳԳ պաշտպանության նախարարությունը՝ ինտերնատուրայի եւ կլինիկական օրգինատուրայի կրթական ծրագրերով իրենց հայտերը: Դրանք ներկայացնելիս հաշվի են առնվել առողջապահական համակարգում եւ ԳԳ զինված ուժերում ներկայիս եւ ակնկալվող կարգային պահանջարկը, ինչպես նաև մարզային առողջապահական կազմակերպությունների կադրային բացը լրացնելու եւ Երեւանի կադրային գերհագեցած համակարգը բեռնաթափելու հարցը:

Կլինիկական օրգինատուրայի կրթական ծրագրով ուսումնառության անվճար տեղերի հատկացման նպատակն է կանոնակարգել ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ կլինիկական օրգինատուրայի ընդունելությունը, ինչպես նաև նպաստել բժշկական կադրային ներուժի պատրաստմանն ու ԳԳ զինված ուժերում բժիշկ-սպանների եւ մարզային առողջապահության կադրային պահանջարկի համալրմանը: Օրգինատուրայում տեղերի հատկացումը հնարավորություն է ընձեռում ապահովել շարունակական կրթությունը, ինչպես նաև առողջապահության համակարգում առանցքային մասնագիտություններով բժիշկ-մասնագետների փոխարինելիությունը ու բժշկական օգնության եւ սպասարկման մատուցման կայունությունը: Ինտերնատուրայում տեղերի հատկացումը նախատեսում է կարգավորել ԳԳ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը:

Որոշմամբ ԳԳ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը թույլատրվել է համապատասխան նախարարությունների կամ ուսումնական հաստատությունների հայտերի հիման վրա տրամադրված տեղերի շրջանակում իրականացնել թափուր մնացած տեղերի վերաբաշխում:

Դեղին ԳՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Կողմերի հավասար ներկայացվածությամբ

սկզբը՝ էջ 1

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է: «Պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհուրդը ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ համապատասխան: Խորհրդի նախագահի եւ անդամների իրավասությունները սահմանվում են կանոնադրությամբ:»

Խորհուրդը ձեռնարկվում է բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադիր, լիազորված մարմնի ներկայացուցիչներից:

Խորհրդի ձեռնարկում կարգը լիազորված մարմնի ներկայացմամբ սահմանում է Գայտատանի Զանրապետության կառավարությունը: Խորհրդի թվաքանակը սահմանվում է տվյալ բուհի կանոնադրությամբ, առնվազն 20 հոգի»:

«Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է, որ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողները պետք է լինեն, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ուսանողական խորհուրդը:

Բուհերի կանոնադրությունների մեջ փոփոխություններ կարող են կատարել հիմնադիրը, ինչպես նաև հաստատության կառավարման բարձրագույն մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդը:

Ֆինանսային կարգավիճակ ունեցող բուհի կանոնադրության մեջ հիմնադրամի կողմից փոփոխություններ կատարելու նորմը բխում է նաև «Ֆինանսումն

րի մասին» օրենքից, որտեղ սահմանված է. «Ֆինանսումնի հիմնադրները կարող են միաձայն որոշմամբ փոփոխություններ մտցնել հիմնադրամի կանոնադրության մեջ: Ֆինանսումնի հոգաբարձուների խորհուրդը կարող է կանոնադրությամբ սահմանված կարգով փոփոխություններ մտցնել հիմնադրամի կանոնադրության մեջ, եթե կանոնադրությամբ նախատեսված է նման փոփոխությունների կատարելու հնարավորություն: Կանոնադրության այդ փոփոխությունները չեն կարող վերաբերել հիմնադրամի նպատակներին կամ շահառուներին»:

Ֆինանսումնի հոգաբարձուների խորհուրդը կազմավորվում է կանոնադրությամբ սահմանված կարգով, իսկ եթե կանոնադրությամբ նման կարգ սահմանված չէ, ապա յուրաքանչյուր հիմնադիր հոգաբարձուների խորհրդի մեկ անդամ սկզբունքով»:

Ըստ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՊՈԱԿ-ի կանոնադրությունը կամ դրա փոփոխությունները հաստատում է հիմնադիրը, իսկ հիմնադրի որոշմամբ նախատեսված դեպքում՝ նրա լիազորած պետական մարմինը»:

Նախագծի հիմնավորման մեջ նաև նշվում է, որ գործող խորհուրդները կառավարչական որոշումներ կայացնելիս երբեմն ունենում են օպերատիվության խնդիր, որը որոշ դեպքերում խոչընդոտում է բուհերի խորհուրդների նախագահների եւ ղեկավարների ընտրության գործընթացներին: Մասնավորապես՝ նման իրավիճակ է առաջացել Երեւանի պետական համալսարանում:

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով խորհուրդների համար նվազագույն շեմ սահմանվել է 20-ը, ինչն առաջարկվում է ամ-



րագրել բուհերի կանոնադրություններում որպես կարգավորման միասնական տարբերակ:

Նոր նախագծով պետական բուհերի կառավարման խորհուրդները կունենան 20 անդամ՝ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, բուհի հիմնադրի եւ լիազորված մարմնի ներկայացուցիչների 25-ական տոկոս՝ այսինքն՝ 5-ական անդամի ներկայացվածություն: Առաջարկվող նախագծով փաստացի պահպանվում են բուհերի հոգաբարձուների խորհրդի ձեռնարկման նախկինում գործող համամասնությունները, ըստ որի՝ խորհրդում ներգրավված բոլոր կողմերն ունեն հավասար ներկայացվածություն: Ակնկալվում է, որ նոր նախագծի ընդունմամբ կբարձրանա բուհերի կառավարման արդյունավետությունը:

Նախագծի քննարկումը e-draft.am հարթակում կշարունակվի մինչև օգոստոսի 26-ը, որից հետո, հաշվի առնելով ներկայացված դիտողություններն ու առաջարկները, այն սահմանված կարգով կներկայացվի ԳԳ կառավարության հաստատմանը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Երեւանի պետական համալսարան

Նշանակվել է ղեկավարի նոր պաշտոնակատար

Երեւանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակել պատմա-հասցիաբանության դոկտոր ԳՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ:

ԳՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ նախկին գիտական խորհրդի անդամներին ներկայացնելով ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի՝ հույս է հայտնել, որ կառավարման մայր բուհը դուրս կգա կառավարման փակուղուց: Նրա խոսքով՝ ԵՊԳ կառավարման ժամանակավոր խորհուրդը ընդունել է ԵՊԳ ղեկավարի պաշտոնակատար Գեղամ Գեւորգյանի՝ դեռուս այս տարվա ապրիլին ներկայացրած հրաժարականը եւ որոշել էր Երեւանի պետական համալսարանի ղեկավարի նոր պաշտոնակատար նշանակել Գովհաննես Գովհաննիսյանին:

Նախարարը շնորհակալություն է հայտնել Գեղամ Գեւորգյանին՝ հատկապես վերջին ամիսներին կատարած աշխատանքի համար՝ նշելով, որ նրա գործունեությունը որպես բուհի կառավարիչ ապահովել է ԵՊԳ-ում կառավարման կայունության եւ ճգնաժամային իրավիճակից դուրս գալու իրավական գործընթացը:

«Պարոն Գեւորգյանն այս ընթացքում դրսևորել է համալսարանական լայն կեցվածք՝ մինչև վերջ հավատարիմ մնալով Երեւանի պետական համալսարանի շահերին», - նշել է Վահրամ Գուսանյանը:

Գեղամ Գեւորգյանը, ամփոփելով ղեկավարի պաշտոնակատարի իր աշխատանքային մոտ երկու տարվա բարդ փուլը,

նշել է, որ այդ ընթացքում կատարած քայլերը տեղին են եղել եւ ինքը դրանց համար չի ափսոսում:

Ղեկավարի նոր պաշտոնակատար Գովհաննես Գովհաննիսյանն էլ նշել է, որ պատրաստվում է առաջիկայում հանդիպումներ ունենալ ԵՊԳ ստորաբաժանների, ամբիոնների եւ ֆակուլտետների ղեկավարների հետ՝ հասկանալու համար բոլոր մտահոգությունները:

«ԵՊԳ-ն պետք է լինի քաղաքական եւ կուսակցական բոլոր տեսակի շահարկումներից զերծ կրթական հաստատություն: Այդ կարգի բոլոր խնդիրները պետք է մնան անցյալում», - նշել է Գովհաննես Գովհաննիսյանը: Նա նաև շնորհակալություն է հայտնել ԵՊԳ բոլոր նախկին ղեկավարներին՝ նշելով, որ նրանցից յուրաքանչյուրն իր ներդրումն է ունեցել բուհի զարգացման գործում:

«Գիտական մտքի աջակցության, քննադատության եւ մտահոգության անհրաժեշտությունը միշտ լինելու է, որովհետեւ միայնակ կամ մի քանի հոգով հնարավոր չէ բուհի զարգացում ապահովել: ԵՊԳ-ն պետք է դառնա բարձրագույն կրթության առաջատարը, եւ այդ նպատակով առաջին հերթին պետք է ստեղծվի կրթության որակի եւ ակադեմիական մթնոլորտի բարելավմանը միտված միջավայր», - նշել է Գ. Գովհաննիսյանը՝ ընգծելով, որ ինքը բաց է քննարկումների եւ առաջարկների համար:

Ամփոփելով հանդիպումը՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Գուսանյանը վստահեցրել է, որ ԵՊԳ-ն ընթացող գործընթաց-

ները եղել են մնալու են բացառապես օրինականության դաշտում: ԵՊԳ ժամանակավոր խորհրդի առաջնային խնդիրը ԵՊԳ հոգաբարձուների խորհրդի ձեռնարկումն է, որից հետո կհայտարարվի ղեկավարի ընտրության մրցույթը:

Չափելիքը, որ Գովհաննես Գովհաննիսյանը 2018 թվականին եղել է նախկին կրթության եւ գիտության նախարարության բարձրագույն կրթության ոլորտում համակարգող փոխնախարար: Այնուհետև՝ 2018 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները հետո եղել է ԳԳ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, երիտասարդության եւ սիյուլոքի հարցերով մշտական հանձնաժողովի փոխնախագահը:

ԵՊԳ Գիտական խորհրդի անդամների հետ հանդիպումից հետո նախարարը պատասխանել է լրագրողների հարցերին եւ անդրադարձել բարձրագույն կրթության ոլորտում հանրային հնչեղություն ստացած մի շարք խնդիրների:

Անդրադառնալով Սահմանադրական դատարանի «Բարձրագույն կրթության եւ գիտության» մասին ԳԳ Նոր օրենքի առնչությամբ կայացրած որոշմանը, մասնավորապես՝ բուհերի կառավարման խորհուրդների կազմավորմանը վերաբերող դրույթները հակասահմանադրական ճանաչելուն, նա նշել է, որ բարձր դատարանի որոշումը միանշանակ ենթակա է կատարման:

Շարունակությունը՝ էջ 3



# Նշանակվել է ռեկտորի նոր պաշտոնակատար

Բարի լուր

## Մեդալների առատություն

սկիզբը՝ էջ 2

«Օրենքում կկատարվեն խմբագրումներ՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի որոշումը: Անկախ նրանից, որ մենք կարող ենք որոշակի տարակուսանք հայտնել դատարանի վճռի առնչությամբ, բայց չկատարել, իհարկե, չենք կարող»,- նշել է Վահրամ Դումանյանը՝ հավելելով, որ նախարարությունը դեռևս պաշտոնապես ՍԴ վճիռը չի ստացել: Ստանալուց հետո այն կուսումնասիրվի, եւ կտրվեն նոր կարգավորումներ, որից հետո, ըստ նախարարի, օրենքը կյանք մտնելու հնարավորություն կստանա՝ ապահովելով ոլորտի երկար սպասված բարեփոխումները:



Սահմանադրական դատարանի ավելի վաղ կայացված վճռով կասեցվել էր Կառավարության որոշմամբ հաստատված բուհերի կառավարման խորհուրդների ձևավորման նոր կարգը, որով նախատեսվում էր հոգաբարձուների խորհուրդների կազմերում փոխել ներկայացվածության համասնությունները՝ ավելացնելով հիմնադրի կողմից առաջարկված խորհրդի անդամների թիվը: Վահրամ Դումանյանի խոսքով՝ ՍԴ-ի նշված որոշումից հետո հաշվի առնելով, որ ԵՊՀ-ում ստեղծվել էր ձգձգմանային իրավիճակ, քանի որ հոգաբարձուների խորհուրդը փաստացի լուծարված էր, իսկ ռեկտորի գործող պաշտոնակատարը հրաժարական էր տվել, եւ չկար այն մարմինը, որն իրավասու էր ընդունել այդ հրաժարականը եւ նշանակել նոր ժամանակավոր կառավարիչ, գործի է դրվել դեռևս 2002 թվականին ընդունված «Հիմնադրամների մասին» օրենքի համապատասխան կարգավորումը:

«Սյուիքը» մենք ընդունել ենք օրենք, որը 19 տարի գործել է եւ որեւէ մեկի մոտ որեւէ հարց չի առաջացրել: Բայց երբ մենք օրենքի կարգավորում ենք գործի դրել, իրավաբանները համակարծ նկատել են, որ սահմանադրականության հարց կա: Չարմանալի է, որ այդ խնդիրը չի առաջացրել օրենքի ընդունման ժամանակ: Սա իրավաբանական մտքի խնդիր է: Մեր խնդիրը կրթական է, եւ մենք անելու ենք ամեն ինչ՝ կրթության որակի եւ բովանդակության բարելավման ուղղությամբ»,- նշել է նախարարը:

Նա նաեւ ավելացրել է, որ այս պահին ԵՊՀ-ում տրված լուծումը վերջնական չէ: Օրենսդրության շրջանակում արվելու է ամեն ինչ, որպեսզի ԵՊՀ-ում եւ մյուս բուհերում ձևավորվեն հոգաբարձուների խորհուրդներ, եւ ըստ անհրաժեշտության անցկացվեն ռեկտորների ընտրության մրցույթներ:

Պետությունը սահմանել է նվազագույն շեմը: Ի պատասխան լրագրողի՝ Կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ բուհերի ռեկտորների համար սահմանված գիտական պահանջների մեղմացման մասին հարցի՝ նախարարը նշել է, որ Կառավարությունը սահմանել է նվազագույն պահանջները: Շահարկմանը, թե նշված որոշումը կայացվել է ԵՊՀ-ում իշխանության համար ցանկալի ռեկտորի ընտրությունն ապահովելու համար, Վահրամ Դումանյանը հակադարձել է. «Պետք է հաշվի առնել, որ մենք, բացի

ԵՊՀ-ից, ունենք այլ բուհեր եւս: Ունենք 16 պետական բուհեր, որոնցում ռեկտորի համար սահմանված տարբեր պահանջներ կան: Պետությունը սահմանել է մերքին նվազագույն շեմ. ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի գիտական աստիճան եւ առնվազն հինգ տարվա ակադեմիական եւ գիտական գործունեության ստաժ: Սակայն ցանկացած բուհ կարող է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ իր կանոնադրության մեջ սահմանել լրացուցիչ պահանջներ, այդ թվում՝ գիտությունների դոկտորի, դոցենտի, պրոֆեսորի եւ այլնի: Մենք սահմանել ենք նվազագույն պահանջը, մնացածը թող որոշի բուհը»:

Նախարարի խոսքով՝ պետական քաղաքականության տեսանկյունից առաջնայինը կրթության բովանդակության եւ որակի հարցերն են. թե ինչպես կընտրվի ռեկտորը, դա երկրորդական հարց է:

«Մեզ պետք է կրթական արդյունք, զարգացող գիտություն, որակյալ մասնագետների թողարկում, որոնցով մեր կայանալի կլինենք աշխարհում: Ռեկտորի նշանակումը կարելի է, սակայն ավելի կարելի է, քան կրթության բովանդակությունը: Բարձրագույն կրթության ոլորտում պետք է փրկիչներ փնտրել, որովհետեւ բուհի զարգացումը պայմանավորված չէ միայն ռեկտորի անձով»,- ընդգծել է նա:

Ծեպագրույցի ընթացքում լրագրողները նախարարին հարցեր են ուղղել բուհական ոլորտին առնչվող մի շարք այլ խնդիրների առնչությամբ եւս:

Կարինե ՍԱՆՈՒԿՅԱՆ

Հարունակությունը՝ էջ 5

## Կաշակցեն ուսուցիչների պակաս ունեցող հաստատություններին

2021 թվականի սեպտեմբերից «E-school Armenia» նախագծի շրջանակում ընտրված 18 մենթոր դպրոցների ուսուցիչներն էլեկտրոնային եղանակով կդասավանդեն այն հանրակրթական ուսումնական հաստատություններում, որտեղ առանձին առարկաների գծով մասնագետների պակաս կա: Նախորդ տարի ուսուցիչի պակաս ունեցող 101 դպրոցում ստեղծվել են էլեկտրոնային ուսուցման համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցված դասասենյակներ:

Ծրագրի շրջանակում կրթության հասանելիությունն ապահովելու նպատակով մենթոր դպրոցները կիրականացնեն անհրաժեշտ առարկաների էլեկտրոնային դասավանդումն այն երեխաների համար, որոնք զրկված են տվյալ առարկան սովորելու հնարավորությունից:

Տեղեկացնենք, որ 2020 թվականի սեպտեմբերից հեռավոր դասեր են իրականացվել 5000 եւ ավելի աշակերտների շրջանում: Հավաքագրվել է ոլորտում բազմամյա փորձառություն ունեցող 29 ուսուցիչ, որոնք տեսադասերի, վեբինարների, գրավոր եւ այլ նյութերի միջոցով մատուցել են առարկայական ծրագրերը: Հեռավոր ուսուցման կազմակերպման բաժնի ղեկավար, «E-school» ծրագրի տնօրեն **Հայկ Դավենյանի** խոսքով՝ ուսուցիչների ընտրությունը կատարելուց հետո շատ կարելի էր նրանց համար մշակել աջակցության համակարգ՝ առարկայական ուսումնական ծրագրերն արդյունավետ մշակելու նպատակով: Ներդրվել է աջակցման այնպիսի մեխանիզմ, որ մենթորներից եւ

ավագ ուսուցիչներից յուրաքանչյուրն ունենա իր առարկայական խումբը:

Հավելենք, որ E-school Armenia ծրագիրը կյանքի է կոչվել կորոնավիրուսի համավարակի պայմաններում, երբ 2020 թվականից սկսած աշխարհը նոր մարտահրավերների առաջ էր կանգնել, եւ որպես առաջնահերթություն պետք էր ապահովել նաեւ կրթության շարունակականությունը: E-school-ն արձագանք էր համավարակին, սակայն, այսօր այն դարձել է որակյալ էլեկտրոնային բովանդակության ստեղծման, էլեկտրոնային դասավանդման եւ փորձի կուտակման հարթակ:

Մասնավորապես՝ նախագծի ընթացքում հանրակրթական դպրոցի 1-12-րդ դասարանների աշակերտների համար մշակվել եւ նկարահանվել է շուրջ 2000 տեսադաս, այդ թվում՝ ժեստերի լեզվով, որոնք մշտապես հասանելի են E-school Armenia-ի Youtube-յան ալիքում: Հանրակրթական առարկայական ծրագրերին համապատասխան՝ ուսուցիչները մենթորների օգնությամբ մշակել են առարկայական ծրագրերը եւ թեմատիկ պլանները եւ դրանց համապատասխան նկարահանվել են տեսադասեր, պատրաստվել նյութեր եւ իրականացվել վեբինարներ:

Հիշեցնենք, որ գործում է նաեւ սահմանափակ բարձրելեռնային համայնքներ ուսուցիչների գործուղման էլեկտրոնային շտեմարանը՝ kadrer.emis.am, որտեղ այս պահին ներկայացված է 196 թափուր հաստիք:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դասագիրք

... Որ վերադառնան բնականոն կյանք

Գործընթացն ամբողջությամբ կդառնա էլեկտրոնային

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել 33 ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը, համաձայն որի այդ գործընթացն ամբողջությամբ կդառնա էլեկտրոնային:

Նախագծի ընդունման արդյունքում նվազագույնի կհասցվի (կբացառվի) դասագրքերի եւ ուսումնական հաստատության սովորողների միջև քանակական տարբերությունը, ինչը նախկինում վերահսկելի չէր, ինչպես նաեւ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու գործընթացը կդառնա ավելի ոլորտի:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է դպրոցները դասագրքերով ապահովելու ընթացակարգի փոփոխություններով, ինչպես նաեւ հանրակրթական ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ օտար լեզվով խորացված ուսուցմամբ, ազգային փոքրամասնությունների եւ ռուսերենով ուսուցմամբ դասարանների դասագրքերի տրամադրման մեկ միասնական կարգ սահմանելու պահանջով:

Գործող իրավակարգավորմամբ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու գործընթացն իրականացվում է Դասագրքերի եւ տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցով: Ուսումնական հաստատությունների կողմից դասագրքերի հայտագրումը եւ հետագա ամբողջ գործընթացն իրականացնելու աշխատանքներն ընթանում են միայն թղթային եղանակով՝ մարդկային մեծ ջանքերի շնորհիվ, որը եւ աշխատատար է, եւ ժամանակատար:

Նախատեսվում է մեկ միասնական կարգ ունենալ բոլոր դասագրքերի համար եւ այդ շրջանակում կարգավորել նաեւ հետեւյալ դասագրքերի շրջանառությունը.

- հաստատության ուսումնական պլանով սահմանված ազգային փոքրամասնությունների լեզվին, պատմությանը, մշակույթին վերաբերող դասագրքերի,
- օտար լեզվով խորացված ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ դասագրքերի,
- ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարաններում օգտագործվող դասագրքերի,
- մասնագիտացված հանրակրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ դասագրքերի,
- բրայլյան դասագրքերի եւ տետրերի:

Նախատեսվում է թվայնացնել ինչպես վերոնշյալ, այնպես էլ տարրական դասարանների դասագրքերի պատվերների ձեւավորման, հաշվառման գործընթացը՝ խուսափելով մարդկային գործունակ պայմանավորված վրիպակներից եւ սխալներից:

33 պետական բյուջեի եւ օրենքով չարգելված այլ միջոցներով հրատարակված դասագրքերի եւ ուսուցչի ձեռնարկների շրջանառության գործընթացը կիրականացվի Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով: Մասնավորապես, վերոնշյալ հարթակում կիրականացվեն տարրական դասարանների եւ թվարկված խմբերի դասագրքերի հայտագրման, պատվերի ձեւավորման եւ հաշվառման գործընթացները:

Նախագծով սահմանվում է նաեւ մշտադիտարկում իրականացնել դասագրքերի բաշխման գործընթացի նկատմամբ:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ օգոստոսի 27-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հիշեցնենք, որ սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է 33 պետական բյուջեի, «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակում: Ուսուցատուության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է մասնավորապես եւ ծնողական խորհուրդների կամատեղ նիստում, որը հաստատում է տնօրենը:

Հավելենք, որ առաջիկայում հանրային քննարկման կներկայացվի նաեւ դասագրքերի ստեղծման, դրանց գնահատման հանձնաժողովների ձեւավորման նոր կարգի նախագիծը:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

սկիզբը՝ էջ 1

«Երիտասարդությունը տարիք չէ, էություն է, բովանդակություն, մտածելակերպ եւ պատրաստակամություն:

Այս առումով՝ երիտասարդների ուսերին են դրված պետության խնդիրները, ապագայի կերտման պատասխանատվությունը,- ասել է Վ. Դունանյանը եւ հավելել,- վերջին մեկ տարում մեզ պատուհասած համավարակն ու պատերազմը շեղել են կյանքի բնականոն հունը: Պատերազմի հիմնական ծանրությունն իրենց վրա կրեցին մեր երիտասարդները, եւ այժմ համատեղ ուժերով ամեն ինչ պետք է անենք նրանց բնականոն կյանք վերադարձնելու եւ զարգացման ուղիով առաջ գնալու համար»:

Երիտասարդներին հայերենով շնորհավորել է նաեւ ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարիքը: «Աշխարհում այսօր մեծ փոփոխություններն իրականացնում են հենց երիտասարդները, եւ ապագայի խնդիրը լուծելի է միայն նրանց հետ համատեղ ջանքերով,- ասել է նա: Որպես հարց-մարտահրավեր՝ Շարիքը դիմել է երիտասարդներին. «Որո՞նք են այն երազանքներն ու փոփոխությունները, որ կցանկանայիք իրականացնել ձեր կյանքում, ձեր շրջապատում: ՄԱԿ-ը պատրաստ է աջակցել եւ կյանքի կոչել ձեր գաղափարները: Մենք հավատում ենք երիտասարդության ուժին»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ամփոփիչ խոսքում կարելու էր երիտասարդների հետ շփումների ակտիվացումը՝ մշտելով, որ այն կարելու է պետական քաղաքականությունը փաստապես դարձնելու առումով: «Ձեզ լսելը շատ հետաքրքիր էր, որովհետեւ դուք առաջ եք քաշում առաջին հայացքից պարզ, սակայն իրականում շատ կարեւոր հարցեր: Պետությունը բոլոր մակարդակներում ունի հստակ անելիքներ: Մենք փորձում ենք պետական քաղաքականությունը դարձնել առավել մասնակցային, եւ այս առումով հանրային կյանքում երիտասարդների նախաձեռնողականությունը եւ նախաձեռնողությունը շատ կարեւոր են միջավայրը փոխելու եւ ավելի լավը դարձնելու ճանապարհին»,- մշտել է փոխնախարարը:

«Ավարիում» ձեւաչափով քննարկման ժամանակ չորս խոսնակ-փորձագետներն անդրադարձել են երիտասարդության առաջնային խնդիրներին: 33



Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը խոսել է համաշխարհային պարենային անվտանգության մասին: «Պարենային համակարգի մասին տեղեկատվությունը կրթություն է, դաստիարակություն, սննդակարգ, մասնագիտական կրթություն, ինչպես նաեւ տնտեսության ճյուղ, որն ամենամեծերից է ամբողջ աշխարհում»,- մշտել է Արման Խոջոյանը՝ ընդգծելով, որ պատահական չէ, որ ՄԱԿ-ն այս տարի երիտասարդության միջազգային օրվա համար ընտրել է «Պարենային համակարգերի փոխակերպում. երիտասարդության նորարարությունը՝ հանուն մարդու եւ մոլորակի առողջության» խորագիրը:

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ABBYY ընկերության փոխնախագահ Արամ Փախչանյանի ելույթը «Նորարար գիտություն եւ ավտերմատիվ կրթություն» թեմայով էր: «Այլընտրանքային կրթությունը մոտ ապագայում դառնալու է համընդհանուր կրթության բաղադրիչ,- մշտել է Արամ Փախչանյանը եւ շարունակել,- կրթության ոլորտում շատ արագ որեւէ փոփոխություն ակնկալելի իրատեսական չէ, քանի որ այն ամենապահպանողական համակարգերից է: Մենք ապրում ենք արագ եւ անընդհատ փոփոխվող իրականության մեջ եւ այլընտրանքի հնարավորություն պետք է տալ բոլոր դպրոցներին»: Բանախոսի համոզմամբ՝ դպրոցը պետք է ստեղծագործի, եւ դա որպես գլխավոր սկզբունք ամրագրված է կրթության բարեփոխումների բոլոր փաստաթղթերում, մասնավորապես հանրակրթության պետական նոր չափորոշում, որը սեպտեմբերից կփորձարկվի Տավուշի մարզում: Նա նաեւ մշտել է, որ նոր չափորոշյով պետությունը կարելու է այլընտրանքային կրթությունը, որի հաջողված

օրինակները, ինչպիսին են «Արմաթ» լաբորատորիաները, արդեն լայն տարածում են գտնում: 7-րդ դասարանից ներմուծվում է նախագծային կրթության գաղափարը, որի հիմքում հետազոտական մոտեցումն է:

«Macro Lab» կազմակերպության հիմնադիր Մայիս Մարգարյանն անդրադարձել է երիտասարդների հավասարաչափ սոցիալական զարգացմանը՝ մշտելով, որ մարզային եւ մայրաքաղաքային համաչափության խնդիրն ավելի շատ հոգեբանական է: «Անհամաչափ զարգացման խնդիրն առաջին հերթին ձեր գլխում է, եթե կարողանաք այն հաղթահարել, բոլոր խնդիրները շատ արագ կլուծվեն»,- համոզմունք է հայտնել նա:

«Cascade People & Business»-ի հիմնադիր եւ գլխավոր տնօրեն, Հայաստանի ՄԹ ասոցիացիայի նախագահ Արիս Կարապետյանը երիտասարդության զբաղվածություն խնդրի մասին խոսելիս բարձրացրել է բուհից մինչեւ գործատու շրջային խնդիրները: «Գործատուն գնահատում է ոչ թե բուհի տված կամ չտված գիտելիքը, այլ մոտիվացիան եւ հմտությունը: Հետեւաբար, պետք է ձեռք բերել արժեքների ստեղծմանը նպաստող կարողություններ՝ լեզուների իմացություն, համակարգչային եւ տեխնոլոգիական հմտություններ եւ այլն: Հաջողակ լինելու համար սովորելու եւ ինքնազարգացման կարողությունն ամենամեծ մշակակրթությունն ունի»,- մշտել է նա:

Բաց քննարկման ընթացքում երիտասարդները խոսնակներին ուղղել են տարբեր հարցեր կրթության բարելավման, հանրային ակտիվության, նորարական նախաձեռնությունների մասին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սշակույթ

«... Հնդկաստանը հիշում է ինձ»

Եւ արվեստասեր հանդիսատես:

Ողջույնի խոսքում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը մշտել է, որ ֆիլմի շնորհանդեսը ընդգծում է հայ-հնդկական ամուր մշակութային կապերը: «Հայ-հնդկական մշակութային կապերն ունեն երկար պատմություն եւ ամուր հիմքեր: Երկու երկրներում հաճախ կազմակերպվում են միջոցառումներ, որոնք խթանում, վերահաստատում եւ ամրապնդում են մեր բարեկամական երկրների մշակութային կապերը եւ ծանոթացնում են հանրությանը մեր երկրների բազմադարյա մշակութային: Վստահ եմ՝ այս միջոցառումը եւս կնպաստի մշակութային ոլորտում հայ-հնդկական արդյունավետ համագործակցության զարգացմանը, համատեղ ծրագրերի եւ ստեղծագործական նոր հնարավորությունների իրականացմանը»,- մշտել է փոխնախարարը եւ հույս հայտնել, որ հայ-հնդկական համագործակցությունը կլինի շարունակական:

Մեր Սկրտչյանը նկարահանվել է ԽՍՀՄ-ի եւ Հնդկաստանի համատեղ արտադրության «Ալի Բաբան եւ 40 ավազակները», «Սիրո լեզուն» ֆիլմերում՝ մարմնավորելով Մուսթաֆայի եւ Բարմանդուի կերպարները: Նա եղել է հնդկ ժողովրդի բարեկամ եւ շատ է սիրել Հնդկաստանը:

«Հրունգիկ Սկրտչյան. Հնդկաստանը հիշում է ինձ» վավերագրական ֆիլմը ստեղծվել է «Հայ-հնդկական բարեկամություն» հասարակական կազմակերպության եւ «Կրաստանի եւ Հնդկաստանի մշակութային պալատի» հիմնադիրներ Ռանանջայ Անանդի եւ Դավիթ Բեժիտաշվիլիի համատեղ ջանքերով:

Ֆիլմում ներկայացված են Տիգրան Մանսուրյանի, Վախթանգ Կիկաբիձեի, Ռուբեն Բիկովի, հնդկ դերասանուհի Հեմա Մալինիի, հնդկ դերասան Դիարմենդրայի եւ այլոց հուշերը Մեր Սկրտչյանի մասին:

Հարունակությունը՝ էջ 5



Մայրենի

Պետական կառույցները պետք է անտեսեն լատինատառ գրությունները

ՀՀ ԿԳՄՍՆ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանն «Արմենպրես» լրատվական գործակալությունում մամուլի ասուլիսի ընթացքում ամփոփել է կոմիտեի վերջին 7 ամսվա գործունեության արդյունքները:

Նրա խոսքով՝ նշված ժամանակահատվածում կոմիտեի վարչական իրավաստիքների բաժինը «Լեզվի մասին» օրենքի պահանջների պահպանման, խախտումների բացահայտման և դրանք վերացնելու պահանջով հայցադիմումներ է ներկայացրել 4 արջական դատարան: Վերջին 7 ամսվա ընթացքում հարուցվել է 63 վարչական վարույթ, քննվել է 18 գործ, որոնցից 7-ի պահանջը բավարարվել է, իսկ 11-ինը՝ տարբեր պատճառներով մերժվել: Երկու բողոք ներկայացվել է Վերաքննիչ դատարան, որով կոմիտեն հետամուտ է եղել «Լեզվի մասին» օրենքի պահանջների պահպանմանը:

«Քանի որ դատարանները տարբեր հարցերով ծանրաբեռնված են, մեր մյուս հայցադիմումները կրճատվեն 2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին: Վստահեցնում են, որ մեր նպատակը տուգանք նշանակելը չէ: Մեր խնդիրն օրենքի պահանջների պահպանումն է, բանգի հայերենը պետք է լինի ամենուրեք, նոր միայն այլ լեզուները: ՀՀ տնտեսվարողները, կարծես, գործում են ոչ Հայաստանի բնակիչների, այլ զբոսաշրջիկների համար, այդ պատճառով ակնհայտ են բազմաթիվ խախտումները»,- ասուլիսի ժամանակ ասել է Դավիթ Գյուրջինյանը՝ հավելելով, որ, օրինակ, սրճարաններում ճաշացանկը միայն օտար լեզվով է, այնինչ այն պետք է լինի հայերեն, որը

կարող է զուգակցվել այլ լեզուներով:

Հարցին, թե որոնք են ամենախնդրահարույց ոլորտները, Դ. Գյուրջինյանն ասել է, որ առավել շատ խախտումներ արձանագրվում են բնակավայրերի արտաքին հարդարանքի հետ կապված, հատկապես մայրաքաղաքի կենտրոնում, ինչպես նաև սպասարկման և դեղերի ոլորտում: Ըստ բանախոսի՝ ցուցանակները եւ կայքերի հասցեները եւս միայն օտար լեզվով են, մինչդեռ տնտեսվարողների գործավարությունը եւ արտաքին արտադրանքը նախեստառ պետք են լինեն հայերեն: Կոմիտեի նախագահը նաև տեղեկացրել է, որ դեղերի ներդրողները պետք է ունենան հայերեն թարգմանություն, եւ դեղատուրք պարտավոր է քաղաքացուն տրամադրել դրանց հայերեն տարբերակները, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է հաճախորդի առողջությանը:

Դ. Գյուրջինյանը դրական է որակել այն, որ նվազել են սոցցանցերում լատինատառ գրառումները, բայց դեռևս մտահոգվելու առիթ կա:

«Պետական կառույցները պետք է անտեսեն իրենց ուղղված լատինատառ գրությունները, քանի որ դա պատշաճ վերաբերմունք չէ մայրենի լեզվի նկատմամբ: Մի ընկերության համոզեց մեր հայցադիմումն ընդունվել է վարույթ՝ քաղաքացիներին լատինատառ գրություն ուղարկելու համար»,- տեղեկացրել է Լեզվի կոմիտեի նախագահը:

Լրագրողները հարցեր են ուղղել նաև Պարեկային ծառայության ավտոմեքենաների վրա հայերենի գերիշխող լինելու, ինչպես նաև հայոց լեզվի շտեմարանների և օտար անունների հայերեն



համարժեքների վերաբերյալ: Ի պատասխան Դ. Գյուրջինյանը նշել է, որ համապատասխան փոփոխություններ կարվեն Պարեկային ծառայության ավտոմեքենաների վրա, ինչը գոհացուցիչ է: Անդրադառնալով օտար բառերի ու տերմինների վերաբերյալ հարցին՝ բանախոսը նշել է, որ կոմիտեն պարբերաբար հրապարակում է օտար բառացանկերի հայերեն համարժեքները:

«Մենք աշխարհին հետաքրքիր ենք մեր լեզվով, մշակույթով ու տեսակով: Հետեւաբար, հետամուտ ենք լինելու, որ մեր երկրում մենք մեզ օտար կամ անհարմար չզգանք: Փոփոխությունը պետք է լինի մարդկանց մտածողության մեջ, քանի որ կոմիտեի փոքր աշխատակազմը չի կարող գնալ հազարավոր խախտումների հետեւից: Մենք բոլորս այս առումով պետություն ենք. հասարակության տարբեր խմբերը պետք է այնպես անեն, որ հայերենը իսկապես գերակա լինի և պետական լեզվի կարգավիճակ ունենա ՀՀ տարածքում»,- նշել է կոմիտեի նախագահը՝ հորդորելով քաղաքացիներին առավել զգոն լինել այդ հարցում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«... Հնդկաստանը հիշում է ինձ»

սկիզբը՝ էջ 4

Ֆիլմը նվիրված է Հնդկաստանի անկախության 75-ի «Հայ-հնդկական բարեկամություն» կազմակերպության 10-ամյակներին: Ֆիլմի շնորհահնդես իրավաստացվել է Հայաստանում Հնդկաստանի դեսպանատան աջակցությամբ:

«Հայ-Հնդկական Բարեկամություն» հասարակական կազմակերպության համահիմնադիր և նախագահ Ռանանջայ Անանդի խոսքով՝ «Հայ-հնդկական Բարեկամություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրված է 10 և Հնդկաստանը սնկախության 75-ամյակների տոնական միջոցառումների շարքում նախատեսված է եղել նաև ֆիլմի թողարկումը: «Տոնակատարությունների շրջանակում մենք համագործակցում ենք վրացի կինոարդյունքներ Դավիթ Բեժիտաշվիլիի հետ՝ հայ և մի-

ջազգային հանդիսատեսին հնդկական ֆիլմերում Ֆրունզիկ Սկրտչյանի ներգրավվածության պատմությունը ներկայացնելու համար: Սկրտչյանը Հայաստանի լավագույն դերասաններից մեկն է, եւ եւ տարիներ առաջ իմացանալով, որ նա նկարահանվել է նաև հնդկական երկու հայտնի ֆիլմերում, շատ ոգեւորվեցի: Սակայն երբ այցելեցի Հայաստան, զարմացա, որ շատերը չգիտեն, որ Ֆրունզիկ Սկրտչյանը նկահանվել է հնդկական ֆիլմերում: Երբ իմ ընկեր Դավիթն ինձ հետ կիսվեց վավերագրական ֆիլմ ստեղծելու իր գաղափարով, եւ եւ իմ կազմակերպությունը ուրախությամբ աջակցեցիք նկարահանումներին: Կարծում եմ, որ ֆիլմը հաղորդակցության ամենաուժեղ միջոցներից է, եւ այս ֆիլմը հսկայական դեր կխաղա Հնդկաստանի, Հայաստանի ինչպես նաև Վրաստանի միջեւ կապերի ամ-

րապնդման գործում»,- նշում է նա:

Դավիթ Բեժիտաշվիլին պատմում է, որ ինքը դեռ մանուկ հասակից է հիշում այն մեծ սիրո մասին, որը կար հայ մեծ դերասանի հանդեպ Վրաստանում:

«Ֆիլմում ներկայացվում են բոլորովին անհայտ փաստեր Ֆրունզիկի հնդկական նկարահանումների շրջանից: Այս ընթացքում մենք առնչվեցինք լեզվաբան արտիստի հետ, որը մեծ պատիվ է մեզ համար: Երջանիկ ենք ու հպարտ, բայց նաև գիտակցում ենք ստեղծի պատասխանատվության չափը: Ուզում էինք անել մի բան, որ դեռ չէր արվել, ուստի շրջանցել ենք նրա անձնական կյանքի որոշ մանրամասներ և կրանավորել ենք Հնդկաստանի, Հայաստանի ու Վրաստանի սերը նրա հանդեպ»,- նշում է Դավիթ Բեժիտաշվիլին:

Կ. ՍԱՆՈՒԿՅԱՆ



Մեդալների առատություն

սկիզբը՝ էջ 3

Վահանի համոզմամբ՝ խնդիրն այն է, որ բուհական դասավանդումը մի քիչ թերանում է այն ուղղությամբ, որ համալսարանում այնքան էլ պրակտիկ գիտելիքներ չեն տալիս, եւ ուսանողն ընթացքում կամ ավարտելուց հետո ինքնուրույն է ձեռք բերում շատ գիտելիքներ եւ հմտություններ, որպեսզի կարողանա աշխատանքի անցնել: Օլիմպիադայի ոսկե մեդալակիրը ցանկանում է ապագայում խորացնել գիտելիքները մաթեմատիկայի, ինչպես նաև ծրագրավորման ուղղությամբ:

Արման Բայրամյանն այս տարի ավարտել է ԵՊՀ-ի մաթեմատիկայի եւ մեխանիկայի ֆակուլտետի բակալավրիատը: Նա 3-րդ տարին անընդմեջ օլիմպիադայում նվաճում է արծաթ մեդալ: «Հունիսի վերջին ինստիտուտում, համալսարանում պայմանավորված՝ անցյալ տարի մրցույթին մասնակցել ենք տանից, իսկ այս տարի՝ արդեն համալսարանից: Ընտրական փուլը կազմակերպել էր Կարեն Քեռյանը, որի արդյունքում ընտրված թիմը մարդիկների հետ մեկ ամիս պարապել է նախապատրաստվել է օլիմպիադային: Հնայած նրան, որ մրցույթն առցանց էր, մեր թիմում կային նոր երեւելիքներ, ու հետեւաբար եղան նոր ծանոթություններ: Բացի այդ՝ օլիմպիադան օգտակար էր նաև նոր գիտելիքների ձեռքբերման ու մարտահրավերների տեսանկյունից այն իմաստով, որ մաթեմատիկական նոր խնդիրների հանդիպեցինք»,- ասում է Արմանը եւ հավելում, որ նոր թեմաներ են քննարկել նաև նախապատրաստական պարապմունքների ժամանակ, ինչը բուհական դասերի ժամանակ չի մատուցվել: Արմանը համոզված է՝ մեր երկրում մաթեմատիկական կրթությունը բավականին բարձր մակարդակի վրա: Նրա խոսքով՝ իհարկե, կան նաև թերություններ, մասնավորապես, դասավանդման հնացած մոտեցումը: «Աշխարհում այսօր այնքան էլ զարգանում, որ 5 տարին մեկ առնվազն այդ մեթոդիկական փոփոխում են, եւ այդ առումով մենք հետ ենք մնում, բայց մյուս առումներով, օրինակ, առարկայական ծրագիր եւ թեմաներ, նորմալ է: Կրթությունն շարունակելու են նույն ֆակուլտետի մագիստրատուրայում, իսկ կաշխատեն հավանաբար կիրառական ոլորտում 21-րդ դարի մաթեմատիկական, այն է՝ մեքենայական ուսուցում, տվյալների գիտություն, շատ արդիական է եւ պահանջված: Մի քիչ էլ որ բարձրանա այդ ոլորտի ֆինանսավորումը, մարդկանց հետաքրքրությունը եւս ինքնընթացիկ կբարձրանա»,- փաստում է մեր գրուցակիցը: Ըստ Արմանի՝ ծրագրավորմանը զբաղվող ընկերություններն այսօր փնտրում են պրակտիկ գիտելիքներ ունեցող անձանց, մինչդեռ համալսարան ընդունված ուսանողների զգալի մասն այնպիսի հմտություններով չի ավարտում բուհը, որպեսզի բավարարի այդ ընկերությունների պահանջը: «Միգուցե համալսարանի դասավանդման մեթոդիկական չի գրավում ուսանողներին կամ ուսանողը չգիտի, թե մաթեմատիկա սովորելով ինչի կհասնի: Խնդիր է նաև տարբեր մասնագիտությունների միջեւ կապի ապահովումը, օրինակ, բնագիտական առարկաների գծով, որպեսզի տարբեր ֆակուլտետների ուսանողներ թեկուզ փոքր խմբերով կամ ծրագրերով համագործակցեն միմյանց հետ: Հնորիակալություն են հայտնում մեր մարդիկներին, նախկին Կարեն Քեռյանին, ով իր զբաղվածությամբ հետ մեկտեղ, ժամանակ գտավ մեզ հետ պարապել, մեզ ոգեւորել, ում հետ նաև հետաքրքիր զրույցներ ենք ունեցել գիտության շուրջ: Այս հաղթանակը լավ անիթ է՝ մեկ անգամ եւս մեր երկրի ու մայր բուհի անունը բարձր պահելու միջազգային ասպարեզում»,- նշում է օլիմպիադայի արծաթե մեդալակիրը:

Մյուս արծաթե մեդալակիրը Հրաչ Եղիազարյանն է, որը սովորում է Հայաստանի ամերիկյան համալսարանի տվյալագիտության ֆակուլտետի 1-ին կուրսում: Նա առաջին անգամ է մասնակցում օլիմպիադային: «Երբ դպրոցում առաջին անգամ մասնակցեցի օլիմպիադայի, այդքան էլ լավ հանդես չեկա, սակայն խնդիրների տեսակը դուրս եկավ եւ որոշեցի զբաղվել այդ ուղղությամբ: Այս հաղթանակն իրականում միայն իմ շնորհիվ չէ, դա Կարեն Քեռյանի եւ իր գործընկերների հետ անցկացրած պարապմունքների եւ այլ մարդկանց շնորհիվ է: Հպարտ եմ նաև իմ համալսարանով, շնորհակալ եմ իմ դասախոսներին, որոնք դասերից հետո եւս օգնում են մեզ»,- ասում է Հրաչը՝ հավաստիացնելով, որ Ամերիկյան համալսարանում մրցունակությունը բավականին բարձր է: Նրա խոսքով՝ տվյալագիտությունը նոր ուղղություն է Հայաստանում, որը ապագայի մասնագիտություն է:

Հ. Հ.

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Բերդի բազմագործառնության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Մեքենաների եւ մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի (1 դրույթ), «Անասնաբուժություն» մասնագիտության ուսումնական պարապմունքները վարող դասախոսի (612 ժամ), «Ջրոսաշրջություն» մասնագիտության ուսումնական պարապմունքները վարող դասախոսի (450 ժամ) քափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020թ. դեկտեմբերի 24-ի՝ «Նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մասնավարժական աշխատողի քափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 48-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում (Ձե 1),
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- 3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Ձե 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է, մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, վերացնել թերությունները եւ համալրել փաստաթղթերի ցանկը:

**Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2021թ. օգոստոսի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ ժամը 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից:**

Մրցույթը տեղի կունենա 2021թ. օգոստոսի 30-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ Բերդի բազմագործառնության պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Բերդ, Թեհլերյան 43:

Տեղեկությունների համար զանգահարել (0267) 2-13-32, (0267) 2-25-88, (094) 95-25-52 հեռախոսահամարներով, էլ. հասցե՝ berdqolej@mail.ru:

Վերընձուլվող Արցախ



Երկարորյա դպրոց

Ստեփանակերտում մեկնարկել է ԱՀ ԿՄՍ նախարարության ընդունած «Երկարորյա դպրոց» ռազմավարական ծրագրում ներգրավված մասնագետների վերապատրաստման դասընթացը: ԱՀ նախագահի կրթության գծով խորհրդակցական Վահրամ Սողոմանյանի խոսքով՝ ծրագրի իրագործման համար արվում է հնարավորը: «Երկարորյա դպրոց»-ում կլինեն Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի եւ Շուշիի շրջանների սահմանամերձ համայնքները: Նոր ուսումնականից ԱՀ 14 դպրոցներում նախատեսվող ծրագիր ուղղված է դասապատրաստման բարելավմանն ու կրթության որակի ապահովմանը: Ուշադրության առանցք է կրող պատերի ու միջհարկային ծածկերի ամրացման աշխատանքները:

Աժ լրատվության եւ հանրության հետ կապերի բաժնի պետ Անահիտ Հայրիյանը մեզ հետ զրույցում մեզ, որ քննարկման արդյունքում առաջարկվել է նախագիծ, որը թույլ կտա իրաժարվել ավելորդ ծախսերից եւ առավել սեղմ ժամկետում ավարտել վերանորոգումը:



Աշխատանքները կիրականացվեն փուլերով՝ ըստ առանձին մասնաշենքերի՝ չխաթարելով ուսումնական գործընթացը: Շինարարությունը կավարտվի 2022 թվականին:

Հանդիպմանը ներկա էին ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, դպրոցի տնօրեն Անահիտ Հակոբյանը, պաշտոնատար այլ անձինք:

կանգնմանը, քանզի շատ ծնողներ չեն կարողանում մասնակցել երեխաների դասապատրաստման գործընթացին: Ծրագրի շրջանակներում կատարվում են դասասեսնյակների արդիականացման, կահավորման աշխատանքներ, որոնք ֆինանսավորվում են Սփյուռքի հայ համայնքների կողմից:

Դասընթացը կունենա երկու փուլ: Առաջինի մասնակցում են Սոս, Թաղավարդ, Խրամորթ, Պատարա, Հաթերք, Չափար, Եղծահող համայնքների դպրոցների տնօրենները, փոխտնօրենները, ուսուցիչները:

Դասընթացի մասնակից Սոսի դպրոցի տնօրեն Մանուշ Վանյանի տեղեկացմամբ՝ պատրաստ են կյանքի կոչել կարելու ու ռազմավարական նշանակությանը այս ծրագիրը: «Փորձելու ենք աշակերտների համար ստեղծել այն բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնց շնորհիվ նրանք կունենան ապահովու-

թյան զգացում եւ կսովորեն այն, ինչ անհրաժեշտ է կյանքում իրենց տեղն ունենալու համար: «Երկարորյա դպրոց»- ին մեր 176 աշակերտներից կմասնակցի 130-ը»,- ասաց Մանուշ Վանյանը:

Նախատեսվում է երեք տարվա ընթացքում «Երկարորյա դպրոց» ծրագիրը ներդնել Արցախի բոլոր դպրոցներում:

Աջակիցների բարի կամքով

Վերանորոգվել է Ասկերանի շրջանի Այգեստան գյուղի մասնակապարտեզը:

Տնօրեն Անահիտ Բարսեղյանի խոսքով 44-օրյա պատերազմից մանկապարտեզի շենքը մեծապես տուժել էր, ինչի հետևանքով դադարեցրել է իր գործունեությունը:

ԱՀ քաղաքաշինության նախարարության աջակցությամբ շենքը վերանորոգվել է եւ օգոստոսի 25-ին այն իր դռները կբացի սաների առջև:

Վերանորոգմանը զուգահեռ անհրաժեշտ է լրացնել նաեւ հրթռակոծությունից վնասված գույքը, այլ պարագաներ:

Վերանորոգմանը զուգահեռ անհրաժեշտ է լրացնել նաեւ հրթռակոծությունից վնասված գույքը, այլ պարագաներ: Վերջերս ծննդով գնել ենք սպասք, խոհանոցային այլ պարագաներ, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Այս պահի դրությամբ մանկապարտեզն ունի սեղան-աթոռների, վարագույրների, խաղալիքների կարիք: Հույս ունենք, որ դրանց պակասը եւս կլրացվի մեր աջակիցների բարի կամքով»,- ասաց Անահիտ Բարսեղյանը:

Սեղեկացնենք, որ մինչ պատերազմը մանկապարտեզն ուներ 55 սան, իսկ հիմա այն աճի միտում ունի:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
ք. Ստեփանակերտ,  
մեր սեփական թղթակից

Հանրակրթության նոր չափորոշիչի փորձարկմանն ընդառաջ

Դիլիջանի «Այբ» կենտրոնական դպրոցում անցկացվել է Տավուշի մարզի դպրոցների տնօրենների եւ փոխտնօրենների վերապատրաստման եռօրյա դասընթաց:

«Այբ» հիմնադրամի մասնագետների կողմից իրականացվող զարգացման դասընթացին մասնակցել են Տավուշի մարզի 82 դպրոցների ղեկավար կազմերի ներկայակայացուցիչները:

Վերապատրաստման մասնակիցներին տեսակապի միջոցով ուղարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժամնա Անդրեասյանը: «Նոր չափորոշիչների արդյունավետ ներդրման գործընթացում չափազանց կարեւոր է դպրոցի ղեկավար կազմի դերը: Տնօրեններն ու փոխտնօրենները լուրջ անելիք ունեն նոր չափորոշիչով նախատեսվող փոփոխությունները կյանքի կոչելու, այդ թվում նոր ուսումնական պլանները, գնահատման կարգը, տարիֆիկացիոն պլանները եւ մնացած բովանդակային բարեփոխումները հաջողությամբ կիրառելու գործում»,- մեղ է փոխնախարարը՝ հաջողություն մաղթելով վերապատրաստման մասնակիցներին:

Ժամնա Անդրեասյանը համագործակցության համար շնորհակալություն է հայտնել գործընկերներին, մասնավորապես՝ բնագիտամաթեմատիկական եւ գիտատեխնիկական առարկաների վերապատրաստումն իրականացնող «Այբ» կրթական հիմնադրամին, որն ամռան ամիսներին ակտիվ աշխատել է ապահովելով վերապատ-

րաստումների դիմամիկ եւ անխափան ընթացքը:

«Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Սոնա Կոչեջյանը հանդիպման ընթացքում մեղ է, որ այս վերապատրաստման այս ծրագիրը առանձնահատուկ են նրանով, որ դպրոցների տնօրենները եւ փոխտնօրեններն առաջին անգամ են վերապատրաստվում անցնում ուսուցիչների հետ միասին: Դրա շնորհիվ նրանք դառնալու են հանրակրթության նոր չափորոշիչի գործընթացի առաջնորդները, որը սկսվել է Տավուշում եւ հետագայում տարածվելու է ամբողջ հանրապետությունում:


Դպրոցների ղեկավար կազմերի վերապատրաստման ծրագիրը հիմնված է արդյունավետ առաջնորդության միջազգային փորձի վրա եւ նպատակ ունի աջակցելու դպրոցների տնօրեններին եւ փոխտնօրեններին իրենց դպրոցներում արդյունավետ կերպով առաջնորդելու բարեփոխումների գործընթացը եւ հանրակրթության պետական նոր չափորոշիչների ներդրումը:

Վերապատրաստման ծրագիրն իրականացվելու է 3 փուլով, որոնցից յուրաքանչյուրը կազմված է եռօրյա դեմ առ դեմ հանդիպումներից: Գործընթացը կուղղորդվի մենթորության խմբային հանդիպումներով ու քննարկումներով եւ կտեւի մինչեւ 2022 թ. մայիս ամիսը:

Կ. ՍԱՆՈՒԿՅԱՆ

# Վերափոխումն Սուրբ Աստվածածնի (Խաղողօրհներ)

սկիզբը՝ էջ 1



## Ճանապարհի հրաշքը

Երբ հանդիսավոր թափորը, սուրբ առաքյալների ու մյուս հավատացյալների ուղեկցությամբ, վառվող մոմերի, օրհներգությունների ներքո մահիճը տանում էր դեպի Գեթսեմանի, հանկարծ երկնքում՝ ներկաների անմիջապես գլխավերելում, մի ընդարձակ, լուսավայլ ու պսակածե ամպ գոյացավ եւ սկսեց ուղեկցել թափորին:

Երուսաղեմի անհավատ բնակիչները, թաղման թափորի անսովոր փառահեղությամբ զարմացած եւ հատկապես չարացած Դիսուսի մորը տրված մեծարանքի հանդես, այդ ամենի մասին հայտնեցին հրեա քահանայապետերին ու դպիրներին: Վերջիններս, Քրիստոսին հիշեցնող ամեն ինչի նկատմամբ զայրույթով ու վրեժխնդրությամբ համակված, անմիջապես իրենց ծառաներին ու զինվորներին ուղարկեցին՝ ցրելու թափորն ուղեկցողներին:

Հուզված ու գրգռված ժողովուրդը եւ զինվորները նետվեցին քրիստոնյաների կողմը, բայց այդ պահին պսակածե ամպն իջավ ներքեւ ու կարծես պատնեշի նման շրջապատեց թափորը: Չնայած հետապնդողներին լսելի էին երգերն ու քայլերի ձայները, բայց ոչինչ տեսանելի չէր, եւ նրանցից շատերը կուրացան: Կուրացածներն **Աստվածամոր** մահճին զղջումով դիպչելուց հետո վերստացան իրենց մարմնավոր տեսողությունը:

Ըստ ավանդության՝ այդ օրը մեկ այլ հրաշք եւս կատարվեց:

Այն ճանապարհով, որով անցնում էր հանդիսավոր թափորը, մի հրեա քահանա էր գնում: Երբ լուսակիր ամպը կրկին վերելում էր, վերջինս հստակորեն տեսավ առաքյալներին ու մյուս ուղեկցողներին, նրա մեջ արթնացավ **Քրիստոսի** հանդես ունեցած նախկին չարությունը, եւ նա նետվեց մահճի վրա՝ այն գետին տապալելու դիտավորությամբ: Սակայն հազիվ էր դիպել ձեռքերով, երբ հանկարծ հրեշտակն աննյութեղեն թրով հատեց նրա երկու ձեռքերը: Կտրված մասերը մնացին մահճին կպած, իսկ ինքն աղաղակով գետին տապալվեց՝ խորապես զղջալով իր խոսքերի եւ գործածի համար: Ուստի **Պետրոս** առաքյալը կարգադրեց նրան մոտենալ կտրված ձեռքերին: Բժշկվելուց հետո նա եւս միացավ թափորին, իսկ հետագայում դարձավ **Քրիստոսի** հետեւորդներից մեկը:

## Գեթսեմանիի պարտեզում

Այսպես Գեթսեմանի հասնելով՝ **Սուրբ Կույսի** մարմինն անփոփեցին քարայրում եւ մուտքը մի հսկա քարով ծածկեցին: Առաքյալները եւ մյուս հավատացյալները չէին հեռանում **Աստվածամոր** գերեզմանից շուրջ երեք օր եւ անընդմեջ աղոթում էին: Այդ ամբողջ ընթացքում չէր դադարում հրեշտակների երգը:

Եվ միայն երրորդ օրը Գեթսեմանի եկավ **Բարդուղիմեոս** առաքյալը եւ սկսեց հուսակտուր ողբալ ու լաց լինել, որ չարժանացավ **Սուրբ Աստվածածնին** վերջին հրաժեշտը տալուն եւ Նրանից օրհնություն ստանալուն: Կարեկցանքից դրդված՝ առաքյալները որոշեցին բացել քարայրի մուտքը, որպեսզի նա կարողանա վերջին հրաժեշտը տալ: Բայց մուտքից քարը հեռացնելուց հետո բոլորը տեսան եւ հաստատեցին, որ **Աստվածամոր** մարմինն այնտեղ չէր, այլ վերափոխվել էր: Բարդուղիմեոս առաքյալին էր վիճակված **Աստծու** իմաստուն նախախնամությամբ միջոց դառնալ **Աստվածամոր** վերափոխումը բացահայտելուն: Քարայրում միայն **Սուրբ Կույսի** հանդերձանքն էր:

## Աստվածամոր պատկերը

**Աստվածածնի** մահվան պատմությանը կից ավանդությունը հիշատակում է նաեւ նրա պատկերի մասին պատմությունը:

Ըստ ավանդության ի մխիթարություն Բարդուղիմեոսի, որ ներկա չէր **Տիրամոր** թաղմանը, նրան հանձնեցին այն կենդանագիր պատկերը, որը **Սուրբ Կույսը** տվել էր Հովհաննես Ավետարանչին: **Մովսես Խորենացու** վկայությամբ՝ Բարդուղիմեոսն այն Հայաստան բերեց եւ գետեղեց Անձեւացյաց գավառի Դարբնոց քար կոչված տեղում, ուր հետագայում, ի պատիվ **Տիրամոր** պատկերի, կուսանոց հիմնվեց: Իսկ հայ եկեղեցիների բոլոր խորաններն **Աստվածամոր** անունով են եւ նրա պատկերով:

## Խաղողօրհներ

**Հին Ուխտում** (Բ Օրենք ԻԶ 1-10) տարվա առաջին բերքը տարվում էր տաճար եւ ընծայվում **Աստծուն**: Ըստ օրենքի՝ դրանք ցորենը, գարին, խաղողը, թուզը, նուռը, ձիթապտուղն էին եւ այլն:

**Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին** օրհնության համար, որպես այգեքաղի երախայրից, պտուղների միջից նախապատվությունը տալիս է **խաղողենու** ողկույզին. աշխարհակործան ջրհեղեղից հետո **Նոյ** նահապետը՝ «այր հողագործ» (Ծննդ. Թ 20), Արարատ լեռան ստորոտի դաշտավայրում այգի է տնկում եւ խաղողագործությամբ զբաղվում: Այդ ժամանակից ի վեր որթատունկի պտուղը դառնում է Արարատյան դաշտավայրի զարդը, համարվում պտուղներից ազնվագույնը եւ կոչվում **ՊՏՂՈՑ ԱՐՔԱ**: Այդ նվիրատվության արարողությամբ մարդիկ իրենց երախտագիտությունն էին հայտնում **Աստծուն**:

Մեր **Տերն** Ինքն Իրեն նմանեցրել է խաղողենուն, (Հովհ. ԺԵ 1-8). այն խորհրդապատկերն է **Սուրբ Աստվածածնի**, խորհրդանշելը **Նոր Ուխտի Քրիստոսահաստատ Սուրբ Եկեղեցու**: Այս առումով



էլ Հայ Եկեղեցուն **Աստվածամոր Վերափոխման** տոնակատարության օրը **Սուրբ պատարագից** անմիջապես հետո տեղի է ունենում **խաղողօրհների** արարողություն:

Ինչպես որքն իր կենարար հյութերով աճեցնում ու հասունացնում է ողկույզները, սույնպես եւ **Բանն Աստված** Իր **Սուրբ Մոր** ամենամաքուր արյունից Իր մարմինը կազմեց ու անճառապես միավորեց Իր **Աստվածությանը**:

Ինչպես խաղողենին իր պտուղների արյամբ՝ զինիով, մարդկային ազգին ուրախարար ու կազդուրիչ հյութ է տալիս, նմանապես եւ **Աստվածածնի** կենդանարար Ողկույզը՝ **Քրիստոս Աստված** Իր արյունն է պարգեւում յուրայիններին, ինչը սուրբ է, քավչարար ու կեցուցիչ՝ հավիտենական կյանքի պատճառ (հմմտ. Հովհ. Զ 54-55):

Խաղողօրհների ընթացքում եկեղեցուն կարդացվում է **Սուրբ Ներսես Շնորհալու** աղոթքը: Աղոթքում հիշատակվում է, որ **Աստված** ստեղծեց բուսականությունն ու պտղատու ծառերը, ապա **Ադամին** ու **Եվային** պարգեւեց ամբողջ **դրախտը**, բայց նրանք, օրհնազանց գտնվելով, դրախտից արտաքսվեցին, իսկ երկիրը նրանց պատճառով անիծվեց: Սակայն **Աստվածորդու** աշխարհ գալով՝ անեծքի կապանքը վերացավ, եւ մարդիկ ձեռքագատվեցին մեղքի ու մահվան ծառայությունից:

Խաղողի օրհնության ընթացքում աղոթքներ են հղվում ոչ միայն պտղի, այլեւ դրա մշակողի, ընծայողի, հողագործի եւ հողի համար՝ **Արարչից** խնդրելով առատ, բերրի, կարկուտից ու սառնամանիքից զերծ տարի:

Այսպիսով, **խաղողօրհները** առհասարակ **Աստծուց** մարդուն պարգեւված բերքի՝ բոլոր տեսակի պտուղների օրհնությունն է:

Աստծու օրհնությունը ստանալու համար մենք աղոթքով դիմում ենք **Սուրբ Աստվածածնին**.

**Մայր եւ Կույս, աղախին Քրիստոսի, դու՛, որ միշտ աշխարհի համար բարեխոս ես, բոլոր ազգերը քեզ երանի են տալիս:**



## Նշվեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը



Օգոստոսի 15-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը: Այս բերկրառատ օրվա առիթով, Մայր Աթոռի միաբանությունը Սուրբ Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար **Գերաշնորհ Տեր Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը**:

Սրբազան Հայրը, իր քարոզում անդրադառնալով տոնի խորհրդին, մասնավորապես նշեց. «*Երկու հազար տարի առաջ Աստվածամայրը մեզ չլքեց եւ չզնաց, այլ ապրում է մեր մեջ, ապրում է բոլոր մայրերի մեջ, եւ մենք անցյալով չենք խոսում Աստվածամոր մասին, որովհետեւ նա այսօր մեզ հետ է*»:

Այնուհետեւ Սրբազան Հայրը, անդրադառնալով առաջին դարում տեղի ունեցած իրադարձություններին, խոսեց Սուրբ Աստվածածնի կերպարի եւ փրկագործության պատմության մեջ նրա ունեցած դերակատարության մասին, ինչպես նաեւ Վերափոխման տոնի խորհրդին պատգամելով ներկաներին ապրել Վերափոխման խորհրդի իրականության մեջ՝ խնդրելով Սուրբ Կույսի բարեխոսությունը:

Եզնիկ Սրբազանը հատուկ անդրադարձ կատարեց որդեկրույս մայրերին վերջիններիս կրած ծանրագույն ցավերն ու վշտերը համեմատելով Աստվածամոր տառապանքների հետ. «*Աստվածամոր նման բազմաթիվ մայրեր կան այսօր Հայաստանում, որոնք զավակներ կորցրեցին, որոնք ունեն այն նույն մայրական ցավը, ինչպիսին Աստվածամայրն ուներ, եւ որոնք համար Աստվածամայրն իբրեւ օրինակ կարող է լինել՝ դիմագրավելու այն ցավերին, որոնք այսօր ունեն իրենց հոգում եւ իրենց սրտում*»:

Այս նտածումներով մաղթենք, որ ամոքվեն վերքերը՝ հոգեւոր վերքերը մեր բոլոր մայրերի, ովքեր որդեկրույս են այսօր, ամոքվեն վերքերն այն բոլոր կանանց, ովքեր իրենց ամուսիններին կորցրեցին եւ ամոքվեն վերքերն այն բոլոր երեխաների, ովքեր իրենց հայրերին կորցրեցին: Թող Աստվածամայրը ձեր որդիների հետ լինի այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից Ամեն»:

Վերջում, աղոթք վերառաքելով առ Աստված, Պատարագիչ Սրբազանը եւս մեկ անգամ հաստատեց, որ Աստվածամայրը կենդանի է, Նա մեզ հետ է: Քրիստոս այս պահին գալիս է Աստվածամորը փոխադրելու: Վաղը նույնպես Աստվածամայրը մեզ հետ է լինելու, բոլորիս սրտերում:

Հավարտ Սուրբ Պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետ **Գերաշնորհ Տեր Մուշեղ Եպիսկոպոս Բաբայանի**, Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց խաղողօրհների արարողությունը:

Վերջում օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:





Փոճի՛ր մտապահել

սկիզբը՝ նախորդ համարում

87) Այրուծի

«Ելի՛ր, արի՛ հայ,
Դառնանք այրուծի,
Սասնա տան Քուռկիկ՝
Վերջը տանք չարի:
Ու վերականգնենք տեղը հայության
եվ դիրքը հայի աշխարհին ցույց տանք»:

Անահիտ Արփեն

«Թռչո՛ւմ են, թռչո՛ւմ են անվերջ, սրընթաց
Կարմիր նժույգները, բաշերը - փրփուր,
Վառվում, հրդեհվում են հետքերը նրանց -
Կարմիր նժույգները հրդեհ են ու հուր...»

Ե. Չարենց

«Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են ձիերը,
Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
Պայտերը խփում են, խփում են հողին-
Անձա՛յր է գիշերը, անհայտ է ուղին»:

Ե. Չարենց



Այրուծի է կոչվել հայոց հեծելազորը հին ու միջին դարերում սկսած Ուրարտուի ու Արտաշեսյանների ժամանակներից: Հայոց այրուծի կորիզը Հին աշխարհում հռչակված ծանրագն կամ սպառազեն հեծելազորն էր, որի համար ընտրվում էին առավել մարմնեղ և ուժեղ ձիեր: Հեծելամարտիկները կրում էին ծանր համդերձանք, «որի մեջ նրանք կարծես փակված էին ինչպես շենքերում» (Պլուտարքոս):

Գլխավոր զենքը երկար նիզակն էր: Որպես գլխավոր հարվածային ուժ՝ գրոհում էին սեպածե շարքերով: Կար նաև թեթևազեն հեծելազոր, որի հիմնական զենքը նետ ու աղեղն էր: Այստեղ արդեն արագավազ ու դիմացկուն նժույգներ էին ընտրվում: Այս զորախումբը հարձակվում էր ցրիվ շարքերով, ուներ թշնամուն հետապնդելու, հետախուզության, մարտակարգը ապահովելու պարտականություններ:

Ծանրագն հեծելազորը Արշակունիները եւ Բագրատունիները համալրում էին ազնվատոհմիկներով՝ ազատներով, բայց պատերազմի ժամանակ ձեւավորվում էր նաև «նամիկ այրուծի»: Գերագույն հրամանատարը ասպետն էր կամ թագադիր իշխանը:

Այրուծի ուներ նաև Կիլիկյան Հայաստանը, որ հանդերձավորվում էր եվրոպական խաչակիր ասպետների սման: Երկու խոսք՝ հայերի գործածած նետ-աղեղների ու նիզակի մասին: Նետ ու աղեղի մեծ ու փոքր տեսակներ օգտագործվել են վաղմջական ժամանակներից: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ ի հայտ են եկել բրոնզե ու երկաթե նետասլաքներով լի կապարձներ: Մ.թ.ա. V դարի պատմիչ Քսենոփոնը գովեստով է խոսում լայնալիճ աղեղի եւ երկար նետերի մասին, որոնց դեմ անգոր են եղել հույն զինվորները:

Նիզակը, որ նաև գեղարդ կամ տեգ է կոչվել, մոտիկից ու հեռվից խոցող զենք էր: Դա սրածայր ձող էր՝ ծայրին ամրացված քարե, ոսկրե, այնուհետ՝ մետաղյա շեղբեր:

Հայ պատմիչները վկայում են պարտված երկրում, որպես քաջության նշան, արքայի կամ զինվորի նիզակը կանգնեցնելու հին հայկական սովորության մասին:

... Նկարում՝ արցախյան ձի:

Ստրաբոնը վկայում է, որ արցախյան ձին Հայկական լեռնաշխարհի հպարտությունն էր, ամենագեղեցիկը, ամենազանգված, ամենասլացիկը:

Ցարածված էին յուրահատուկ նարնջագույն երանգ ունեցողները: Հարթ տարածքներում այդքան արագավազ չէին, բայց լեռներում անգերազանցելի էին:

Բանաստեղծներն են հուշում

88) Թնդանոթ

«Արթնացա... զորքերի շարքում:
Կամավոր:
Հայկական բանակ:
Հրացան: Թնդանոթ: Ռումբեր,
Եվ ահա...
Այգեստանը Վանա»:

Ե. Չարենց



Թնդանոթը հրանոթի տեսակ է, որը փողային հրետանու մյուս տեսակներից տարբերվում է փողի երկարությամբ, հեռահարությամբ, արկի սկզբնական արագությամբ, իսկ փողի բարձրացման անկյունը քիչ է:

Թնդանոթները հիմնականում նախատեսված են գետնամերձ հետագծով կրակ վարելու համար: Թնդանոթից կարելի է կրակ վարել ինչպես փակ դիրքերից դեպի չդիտարկվող նշանակետեր, այնպես էլ ուղիղ նշանառությամբ:

Վառողային հրետանու ստեղծման առաջնությունը վիճարկում են չինացիներն ու արաբները: Ամենահին, հնէաբանական հետազոտությունների ժամանակ գտնված չինական ռմբանետը ձուլված է եղել 1300-ական թվականներին: Համարվում է նաև, որ վառողի ներկայիս բաղադրությունը մշակվել է դեռևս միջնադարում, արաբական աշխարհի գիտնականների կողմից, 13-14-րդ դարում: Կա մի վարկած, որ եվրոպացիները վառողի հետ ծանոթացել են, երբ 13-րդ դարում ֆրանկ-մոնղոլական դաշինքի ժամանակ Կիլիկյան Հայաստանով այն անցել է Եվրոպա, իսկ մոնղոլները դա փոխ էին առել չինացիներից:

Մամյուքների սուլթանության գիտնական Հասան ալ-Ռամահն իր գրքում մամրամասն ներկայացրել է կալիումի սելիտրայի մաքրման պրոցեսը եւ սել վառողի պատրաստումը՝ ճիշտ քանակական հարաբերակցությամբ՝ պայթյուն ստանալու համար: Նրա կողմից պայթյունավտանգ վառողի ստացումը Եգիպտոսին թույլ տվեց առաջիններից մեկը թնդանոթ օգտագործել ռազմական գործում:

Առաջին անգամ թնդանոթները հաջողությամբ կիրառվեցին քարե պարիսպներ քանդելու համար՝ հավանաբար ֆրանսիացիների կողմից, 1874թ., իսկ 1382թ. ձուլվեց «Խելակորոյս Գրետան»:

Թուրքերը թնդանոթներ օգտագործեցին Կոնստանտինոպոլի պաշարման ժամանակ՝ 1453թ., երբ նրանց հեռահարությունը 2 կմ էր: 1757թ. ռուսական թնդանոթները կրակում էին մինչեւ 4 կմ:

Թնդանոթների փողերը սկզբում պղնձից էին, հետո՝ բրոնզից, մինչեւ թուջի հայտնագործումը: Դրանց առաջին մշակողները եղան անգլիացիները՝ 16-րդ դարում, Հենրիխ VIII-ի օրոք:

Իսկ պողպատե բարձր որակի թնդանոթներ առաջինը սկսեց արտադրել Գերմանիան (Ալֆրեդ Կրուպ, 1847թ.):

Սկզբնական ռումբերը քարե միջուկներով էին, հետո եկավ մետաղական միջուկների «դարը»: 1953թ. ամերիկացիները ստեղծեցին միջուկային հրետանի՝ 29կմ հեռահարությամբ: Հետագայում թնդանոթներին որոշ իմաստով հետին պլան մղեց միջուկային զենքը:

Այնուամենայնիվ հրետանին, որին անվանում են «պատերազմի աստված», իր կարելու դերն ունի ռազմական գործի մեջ ներկայումս էլ: Թնդանոթների երկարակետությունը ժամանակակից գերզոր զենքերի առկայության պարագայում բացատրվում է նրանց շահագործման համեմատաբար պարզությամբ, որոշ տեխնիկական հնարավորություններով եւ ոչ բարձր ինքնարժեքով:

Հրետանու հայ խոշորագույն մասնագետ էր Համո Յուլյանը, ում ղեկավարությամբ ստեղծվել են խորհրդային հրետանային զենքի նոր, ավելի կատարյալ տեսակներ, այդ թվում՝ աշխարհում առաջին հակաօդային պաշտպանության բազմաալիքային համալիրը:

... Նկարում՝ Ցար-թնդանոթը Մոսկվայում:

89) Երագ


«Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մոր մոտ էր,
Փայլեց նշույլ ուրախության,
Բայց ափսո՛ս, որ երագ էր»:

Ս. Շահազիզ

Կա տեսակետ, որ երագներն ունեն մեկ հիմնական ֆունկցիոնալ նշանակություն՝ բնագոյների մարզումը, ընդ որում դրանք երագներում մշտապես կրկնվում են: Դրանով իսկ պահպանվում է «բանական մարդ» տեսակի կորիզը, կանխվում տեսակային բազմազանության առաջացումը: Հակառակ պարագայում «բանական մարդու» մեկ տարբերակին կհաջորդեր մյուսը եւ ֆիլոգենետիկ ընթացքում կուտակված փորձը չէր ժառանգվի: Երագներն օգնում են ժառանգելու գենետիկական մեխանիզմներում ամրապնդված հիմնական մարդկային հատկանիշները: Հենց այդ պատճառով էլ մարդու տեսքը եւ նրա բնագոյները հազարամյակների ընթացքում քիչ են փոխվել:

Ձարմանալի է, բայց տարբեր ազդությունների, հավատալիքների, քաղաքական համոզմունքների մարդիկ նույն երագներն են տեսնում: Երագների մեջ աստամներ են կորցնում կամ ամոթահար լինում, որ մերկացել են մարդաշատ վայրերում, նրանք ողջերին մեռած են տեսնում, կամ հակառակը, ուշանում են կարելու հանդիպումից, ծախողվում են քննություններից եւ այլն:

Հոգեբանության պրոֆեսոր Ռայներ Շենհամները (Գերմանիա) կարծում է, որ երագների բացատրության հիմքում կարելի է դնել օրգանիզմի գիշերային աշխատանքի առանձնահատկությունները: Օրինակ՝ երագները մեծամասամբ տազնապալի բնույթ են կրում, բայց դա չի նշանակում, որ ճակատագիրը ձեզ գաղտնագրված նախագուշակություն է ուղարկում: Ընդամենը կեսգիշերվա ու վաղ առավոտվա միջև սերտոտոնինի մակարդակը (իսկ դա անվանում են երջանկության հորմոն) ունենում է իր նվազագույն արժեքը:



Երագի մի շարք տարածված սյուժեներ բացատրվում են գլխուղեղի կառուցվածքում նեյրոնների աշխատանքի էֆեկտներով (Վարոլի կամուրջ): Այդ տեղամասը պատասխանատու է ողնուղեղից գլխուղեղի բաժիններ ինֆորմացիայի փոխանցման համար: Այնտեղ են տեղաբաշխված նեյրոնները, որոնք մեզ օգնում են քնել, կամ, արթնանալով, առույգանալ: Բացի դրանից, այնտեղ են գտնվում նեյրոնների կուտակումներ, որոնք մեզ օգնում են հավասարակշռություն պահպանել եւ պատասխանատու են կորդինացիայի համար: Քանի որ վեստիբուլյար (անդաստակային) դա տարածության մեջ գլխի եւ մարմնի դիրքի փոփոխություններ ընկալող եւ հավասարակշռությունն ապահովող համակարգ է) եւ քնի ու առույգության նեյրոնները սերտ հարեւանությամբ են, ինֆորմացիան այն մասին, որ մարմինը կաթվածահար է, զգոն ուղեղը ներիյուսում է երագատեսության հյուսվածքի մեջ: Այդ պատճառով էլ երագներում մենք հաճախ չենք կարողանում տեղաշարժվել, չնայած շտապում ենք ողջ ուժով: Կամ էլ չենք կարող փախչել հետապնդումից, ընկնում ենք, թռչում, լողում եւ փակվում:

Այնպես որ, վատ երագը ոչ թե չարագուշակ նշան է, այլ ազդանշան, որ կենտրոնական նյարդային համակարգը լավ է աշխատում:

Երագները բազում այլ նշանակություններ ունեն. պահպանում են քունը, մարդու առջեւ ծագած խնդիրների ու կոնֆլիկտների լուծման ուղիների որոնումներ են հանդիսանում, ձեւավորում են նոր հակումներ ու հատկություններ, նպաստում են երեւակայության զարգացմանը եւ այլն:

... Նկարում՝ կադր «Գտնված երագ» հայկական մուլտֆիլմից: Մեջբերումը շարժանկարից. «Ես, աստղ է ընկնում: Շուտ, շուտ մի բան մտածիր, անպայման կկատարվի»:

Հարունակությունը՝ էջ 9



# Բանաստեղծներն են հուշում

սկզբը՝ էջ 8

## 90) Խորոված

«Մինչ նազ անող խորովածի համ-դամը գա՛նես, տանտիրոջ իրավունքով, ձեզ թամադա»

Պ. Սեւակ

«Գառան մըսեն շամփուրի վըրա խորոված, կասկարայով գառան միսը տապակած»:

Ռ. Պատկանյան



Ա. Աբրահամյանի, Յու. Բարոյանի և Մարգարյանների «Ինֆորմատիկայի հիմունքներ» իրաշալի գրքում խորովածի պատրաստման հաջորդական քայլերի նկարագրությունը կա.

1. Վերցնել միս, սոխ, քացաղ, պղպեղ և աղ:
2. Կտրատել միսը և սոխը:
3. Խառնել մեկ ամանի մեջ միսը և սոխը:
4. Ավելացնել աղը, պղպեղը և քացախը:
5. Թողնել ստացածը 3-4 ժամով:
6. Շարել միսը շամփուրների վրա:
7. Վառել կրակը:
8. Սպասել մինչև կրակը ճստի:
9. Դնել շարված միսը կրակի վրա:
10. Հետեւել կրակին:

11. Եթե միսը եփվել է, կատարել 12-րդ հրահանգը, հա-կառակ դեպքում՝ 10-րդը:

12. Մատուցել խորովածը:

Սա ճշգրիտ կարգադրագիր է՝ կատարելու գործողությունների այնպիսի հաջորդականություն, որն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը կամ առաջադրված խնդրի լուծմանը: Դա ինֆորմատիկա գիտության առանցքային հասկացություններից մեկն է՝ ալգորիթմի սահմանումն է, մեր կոնկրետ խնդրի դեպքում ոչ միայն ցանկալի, այլև համեղ արդյունք ստանալու համար:

Իսկ խորովածը հնագույն ավանդական կերակուր է՝ թոնրի մեջ կամ խարույկի վրա, պտտվող շամփուրին հագցված կենդանու ամբողջական մարմինը կամ կտրատված միսը խորովելու ճանապարհով: Ամռանը, մսից բացի, խորովում են նաև լոլիկ, տաքդեղ, սմբուկ, կարտոֆիլ և այլն:

Խորովածի մի այլ տեսակ (հովվի խորոված) պատրաստում են ոչխարի կամ գառան՝ իր իսկ մորթու մեջ փաթաթած միսը մոտ 0,5 խորությամբ փոստում հողով ծածկելով և վրան կրակ վառելով:

Ահա և Վանա խորովածի նկարագիրը: Նոր մորթած ոչխարի չորս ոտքն իրար էին կապում, ամբողջ մարմինը ծեփում պինթանով (այսուրով և աղով խառնած թանձր խյուսով), լավ վառված և արդեն ծուկը վերջացած թոնրի մեջ գցում երկու կամ երեք քար ու քարերի վրա դնում մի դասարկ հողե չողտրիկ: Թոնիրը խառնելու համար ու կեռագլուխ երկու երկաթե շշերը մտցնում էին ոչխարի ոտքերի արանքը և կախում թոնիրը: Թոնրի բերանը ծածկում էին «թոնրան սալով», սալն էլ ծածկում «թոնրան ջուլով»:

Ոչխարի վրա ծեփված աղի խյուսը չորանալով ամուր կեղև էր կապում և այն պոկում էին քիչ սառելուց հետո:

... Նկարում՝ վերելում թոնրի խորոված, ներքեւում՝ մանդալի:



## 91) Գյուղ

«Ողջո՛ւյն քեզ, ո՛վ գյուղ, խաղա՞ղ ապաստան, Գործի, հանգստի, ոգեւորության, Ու քաղցր մոռացման և բախտի գրրկում Հոսանքն օրերիս իմ մենակ կյանքում Անցնում է, սահում այնպես լուռ, անտես-Սայրենի՛ անկյուն, ողջունում եմ քեզ»:

Ա. Պուշկին


«Պարիսպներով շրջապատված Բերդի պես էր ձեր տունը հին. Գյուղի մեջ, բայց գյուղից զատված Մի դոյակ էր հեքիաթային»:

Յ. Սահյան

Ամերիկյան առածն ասում է. «Աստված ստեղծել է գյուղը, իսկ քաղաքը՝ մարդիկ»: Իսկ մեր մեծերը միշտ նկատել են ազգային դիմագիծ, ավանդույթներ պահողը առաջին հերթին գյուղն է:

Իսկ ինչպիսի՞ն է եղել հայկական գյուղի նկարագիրը ժամանակի հոլովույթի մեջ:

Նախնադարյան ժամանակներից ընդհուպ մինչև 20-րդ դար գետնամած, հողածածկ շինություններով ծայրահեղ խիտ ու անկանոն կառուցապատված են եղել մեր գյուղերը: Ցուրտ, լեռնային շրջաններում, որտեղ գլխատան բաժանումները ծածկված բակի կամ միջանցքի շուրջն են համախմբվել, իսկ մուտքերի առաջ բացակայել են սյունավոր ծածկույթները, գյուղերը ծուլվել են շրջապատին:



Այլ վայրերում առանձնապես գեղեցիկ տեսք են ստացել լանջերի վրա սանդղածե դասավորված այն գյուղերը, որոնց գլխատները սյունավոր ծածկույթ են ունեցել: Առանձին թաղերում բնակվել են ազգակցական համակեցությանը: Իշխող դիրք է ունեցել եկեղեցին՝ որտե՛ւ բլրի վրա կամ փոքր հրապարակում:

Հարթավայրերի ու հովիտների գյուղերը ավելի ազատ են կառուցապատվել, ունեցել են բակ, երբեմն՝ տնամերձ հողամաս:

Ժամանակակից գյուղերում առանձնատներին կից, կամ տնամերձի մի այլ հատվածում են օժանդակ կառույցները: Գյուղերի մի մասի տնամերձերում այգիներ կան: Բայց գյուղերի գլխավոր առանձնահատկությունը՝ բնության մեջ, բնությանը ներդաշնակ ապրելն է:

... Նկարում՝ Յ. Թունմանյանի տուն-թանգարանը Լոռվա Դսեղ գյուղում:

## 92) Ապագայի քաղաքներ

«Եվ որպես երազ տազնապալից, տեսիլք անողը, Հրեջ մի հսկա-համաչափ, Ծածկելով հողագունդը գանգով ապակյա, Գալիք քաղաք-տունը ներկայացնում է ինձ»:


Վ. Բրյուսով

Մի հետաքրքիր գիրք ունի ֆրանսիացի հայտնի ճարտարապետ Միշել Ռագոնը՝ «Ապագայի քաղաքները»:

Գրքում հեղինակն առաջադրում է այլ պատկերացումներ՝ ժամանակի ու տարածության կազմակերպման մասին: Քաղաք-ձագարներ, X կամ A տառերի նմանությամբ քաղաքներ, քաղաք-կամուրջ Լա-Մանշի վրայով:

Ու ընդհանրապես, ինչպե՞ս են պատկերացնում ճարտարապետները ապագայի քաղաքները: Կլիմի նա արդյոք տարածակ՞ն, կախովի՞, թե՞ կանցնի գետնի տակ, կամ գուցե ջրի՞ տակ:

Այս և մեր ժամանակների նշանավոր ճարտարապետների շատ գաղափարներ ֆանտաստիկ են թվում, բայց



ամեն մի երազային սկզբում բարդ ու անսովոր է թվացել...

«Շենքը նույնպես բանդակ է»՝ համոզված է Ռագոնը: Օրինակ է բերում՝ ժամ Ֆոժերոնի բարձրաբերձ շենքի նախագիծը, որ վերելի մասում ողողված է արելի լույսով և հիշեցնում է Մուրի կամ Լիպչեցի քանդակագործության երկերը:

Իսկ ճարտարապետ Լը Կորբյուզին բոլորովին աներկմտորեն արտահայտվել է՝ «Ես պայմանավորված ձեռքի գյուտարարությամբ զբաղվող գեղանկարիչ եմ»:

Առարկելով Լը Կորբյուզիի մտածողությանը՝ վիեննացի ճարտարապետ Ֆ. Կիլերը ասում է. «Տունը բնակվելու մեքենա չէ, և ոչ էլ մեքենան՝ արվեստի ստեղծագործություն: Տունը կենդանի օրգանիզմ է և ոչ թե մեռած նյութերի համադրություն. տունը ապրում է իր ամբողջությամբ և իր առանձին մասերով: Նա կարծես մարդկային կյանքի համար մի պատյան է»:

Ըստ Պ. Գրիյոյի նախագծի՝ օդանավերը կարող են «նստել քաղաքի գագաթում այնպես, ինչպես ավիակրի տախտակամածի վրա: Իսկ աղմուկ չի լինի, որովհետև «ռեակտիվ սավառակները սարքավորված կլինեն խլացուցիչներով»:

Լրիվ արտառոց թվացող նախագծեր կան ծովալիճ-քաղաք կամ վերցցյա քաղաք, կախովի տրանսպորտ (օդային մետրո), լողացող քաղաքներ, անկշռելիության պայմաններում բուժվելու հնարավորություններով հանգստի ոչ երկրային քաղաք, ճոպաններից կախված ավան: Ու նույնիսկ թափանցիկ քաղաք... գյուղի վրա, որտեղ ծառեր են ու կենդանիներ: Իսկ քաղաքը՝ ապակուց, պլաստմասսայից ու ամուր, բայց թեթև կոնստրուկցիաներից...

Լուսնի քաղաքի մի նախագիծ կա, որը նման է բացված հովիտի: Նրա հենապատերը բաղկացած են խողովակավոր կայաններից ու նախալարված ճոպաններից: Ծածկը նախատեսվում է պողպատե կամ պլաստմասսայե բանվածքից: Իսկ ինչ վերաբերվում է պողպատյա բանվածքից կազմված հիմքերին, ապա բավական է, որ այն լցվի լուսնային ապարներով: Արհեստական կլիմայով օժտված ներքին ծավալը օազիսի նման մի բան ստեղծելու հնարավորություն կտար:

Ի դեպ, կան նաև մարդիկ, ովքեր աշխատում են այնպիսի քաղաքների նախագծեր ստեղծելու վրա, որոնք մի օր տիեզերական կղաճան, այսինքն՝ կարկվեն երկրի ձգողությունից և կպտտվեն մոլորակի շուրջը, բայց կարող են կանգ առնել ու ուղղությունը փոխել:

Այս ամենը՝ ապագայում: Իսկ ներկայումս մենք ապրում ենք մեր սովորական դարձած առօրյայով:

«Կարելոյ մի պահ օրվա ընթացքում՝ Սողոմ-գոմորյան ժխորից առաջ՝ Լոռւթյան դրախտ քաղաքի փողոցում: Երկնքից կախված Լուսաստոյի ներքո՝

1. Դողացող լույսեր՝ ռեկլամների գունատ գույներում,
2. Շփոթված ստվեր՝ թխկենիների տակի ստվերում,
3. Ծննդուկների խաղ ու պրոյեկցիա՝ նույն հարթությունում,
4. Ոռոգող առվակի հազիվ լսելի մեղեդի ծորում,
5. Պուրակից հասնող՝ մոլորված մի երգ՝ բոլորից թաքում...»

Արփի-Նե, «Գարուն», N5-6/2012թ.

...Նկարում՝ նկարչի ֆանտազիան՝ ապագայի քաղաքը:

Զարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ավագ դպրոցի ուսուցչուհի, բնագետ

Արդա ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Շիրակի մարզի Արթիկի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, բանասեր



Մեծերի մեծ կրքերը

Ասարարայալ սեր
Մառլեն Դիտրիխ և ժամ Գաբեն



1941 թվականի փետրվարի կեսերին ժամ Գաբենը թողեց գերմանացիների կողմից զավթված Ֆրանսիան: Ի տարբերություն ֆրանսիացի դերասանների մեծամասնության «Մեծ պատրանքի», «Պեպե լե Մոկոյի» հերոսը, հետպատերազմյան շրջանի ֆրանսիական հանրաճանաչ դերասանը Վիշիի վարչակարգի հետ ոչ մի փոխզիջման չէր գնում և չէր կարող հայրենիքում կարիերայի հույս ունենալ: Նա ընտրեց ԱՄՆ-ը շատ կարեւոր պատճառով՝ Միշել Մորգանը, «Remorques» կինոնկարի իր խաղընկերուհին, տարագրվել էր Ամերիկա: Բայց Յուլիուս-հուն դերասանուհին ոչ միայն նոր կարիերա սկսեց, այլև նոր սիրավեպ դերասան Բիլ Մարշալի հետ: Իսկ անտեղյակ ժամ Գաբենը Իսպանիայով և Պորտուգալիայով հսկայական ճանապարհ կտրեց մինչև Նյու Յորք՝ ամերիկյան մաքսավորների զարմացնելով իր ֆիսիարմոնով և մրցահեծանվով... Եվ ահա՝ ոչ այն է հին պատմության ավարտ, ոչ այն է նորի նախագագուցում. Գաբենը տխրում է, իրեն միայնակ է զգում և ոչ պիտանի այս քաղաքում, ուր անելիք չունի իր փարիզյան հին սովորյալներով ու վատ անգլերենով: Նյու Յորքի նորածեխ խանութներից մեկում, որը, բնականաբար, կոչվում էր «Փարիզյան կյանք», նա հանդիպում է... Մառլեն Դիտրիխին: Դեռևս մինչև պատերազմը նրանք ծանոթ էին, բայց միանգամայն թեթևակի... «Գաբենը տղամարդ էր, գերտղամարդ, որպիսին փնտրում է յուրաքանչյուր կին,- կգրի Մառլենն իր «Չուշերում»:- Նա թերություններ չունեց: Նա կատարելություն էր և շատ ավելի գերազանցեց այն ամենը, ինչը ես սպարդյուն որոնում էի կամ փորձում պատկերացնել»:

կարիերայով: Մառլենի իսկ կարիերան այդ շրջանում փոքր-ինչ անկման մեջ էր: Նա խանդավառությամբ խաղում էր իրեն առաջարկված բոլոր դերերը, սակայն ֆիլմերը, չգիտես ինչու, ֆինանսական կործանման էին մատնվում: Բարեբախտաբար, անհաջողությունները նրան քիչ էին հուզում. նա ստեղծագործական մեծ ուժեր ուներ... Մառլենի եռանդը ու հմայքը լիովին բավարար էին, որպեսզի հանոգեին կինոարտադրող Դարիլ Չանուկին՝ հետաքրքրվելու իր նախագծերից մեկով: «Դե ինչ, հնարավոր է, որ դա օգնի նրան վերջապես անգլերեն սովորելու»,- քրթմնջաց Չանուկը՝ լսելով Գաբենի անունը:

Պատմությունը զարգանալու ևս մեկ կարեւոր հանգամանք էր, Անջելո Անուրոյի կարծիքով, նաեւ այն, որ ժամ Գաբենը ֆրանսիացի էր, իսկ ֆրանսերենը Մառլենի երկրորդ լեզուն էր: Նա երբեք չէր հոգում կրկնելուց, որ դաստիարակվել է ֆրանսիական տնային դաստիարակչուհու կողմից և որ հոգու խորքում միշտ իրեն եվրոպացի է զգացել: Ֆրանսիայի տապալված և ժթբախտ երկիր լինելու ցավը Մառլենի մեջ խորն էր և անկեղծ: Իսկ Գաբենը Յուլիուսին հայտնվել էր ոչ որպես աղքատ տարագիր, այլ իր տաղանդի ամենաբուռն ծաղկման և կինեմատոգրաֆիական նոր փառքի եռանդուն որոնման շրջանում: րետա արբոյի մրցակցուհի Մառլենը գիտեր զմայլվել իր սիրեցյալներով և հարգել նրանց: Ժամ Գաբենը ինտելեկտուալ չէր: Օպերայում նա պարտադիր հորանջում էր. երբ Մառլենը նրան խորհուրդ էր տալիս կարդալ Չեմինգուեյի վեպը, նա թոթվում էր ուտերը և փնթփնթում. «Այդտեղ մտածելու անգամ բան չկա»: «Դու դատարկ գլուխ ունես: Լսիր, թե որքան դատարկ է ներսը,- ծիծաղում էր Մառլենը՝ նրա ճակատին կտկտացնելով: Բայց մի՛ փոխվիր: Դու կատարելություն ես»:

Մառլենն իր վրա վերցրեց ամեն ինչ: Սիրահարները Բրենթլուդում տնակ վարձեցին՝ կինոստուդիայի մոտակայքում: Չարեան տիրույթը Գրետա Գարբոյին էր պատկանում: Գաբենը ապշած էր՝ նկատելով, որ ամեն օր՝ ժամը 18-ին, «Աստվածայինը» (Գարբոն), թաքնվելով մազերի դեզի և սեւ ակնոցների մեջ, իջնում էր պարտեզ և դիտում հարեան գույգի «Միստուկացը»: Կինը, որի առջև խոնարհվում էին ամբողջ աշխարհում, սիրում էր թաքուն հետեւել: Գաբենը հիասթափված էր: Ոչ պակաս հիասթափություն չէր նաեւ սնունդը: Չամբուրները և կոկակոլա: Մառլենը կանգնեց սալօջախի մոտ: Լցունած կաղամբը և խաշած միսը դարձան նրա ֆիրմային ուտեստները: Չետագայում Մարսել Դալնը, որ ժամ Գաբենի հետ կողք-կողքի աշխատում էր ժամ Ռեմուարի «Մեծ պատրանք» ֆիլմում, իր հիշողություններում թեթևակի ծաղրում էր Դիտրիխին, որը հյուրերին ընդունում էր իր «սուկե խոհանոցում»՝ «Չեմենս» ֆիրմայի շատ թանկարժեք գոգնոցով:

Մթնոլորտը փարիզյանին ավելի նմանեցնելու համար Մառլենը վերցնում էր Գաբենի ֆիսիարմոնը, իսկ Գաբենը վզին թաշկինակ էր կապում և զլխին կեպի դնում: Եվ Կալիֆոռնիայի արեւի տակ հնչում էին նրա երիտա-

սարդության տարիների մյուզիքլների երգերը: Սովորաբար լուրջ և իր երկաթյա սկզբունքներին հավատարիմ Մառլենը Գաբենի հետ կերպարանափոխվում էր սիրագորով մի կնոջ, որը պատրաստ է սիրելիին շրջապատել հոգատարությամբ, նրան դիմավորել համբույրների տարափով ու ցնծալի բացականչություններով: Դա մի քիչ շփոթեցնում էր որպես կանոն արտահայտություններում զուսպ դերասանին: Բայց նա Մառլենին անվանում էր «Մեծ»: «Ես նրա համար դարձա մայր, քույր, բարեկամ և աշխարհում ամեն ինչ»: Լրագրողների համար ակնհայտ դարձավ Մառլենի բեմը թողնելու և ամբողջովին իրեն այդ տղամարդուն նվիրելու մտադրությունը: Մառլենը ճախրում էր երկնքում, իսկ Գաբենը ստորագրեց իր պայմանագիրը «Ֆոքս» ընկերության հետ:

Մարիա Սայբերը՝ Դիտրիխի և Ռուդոլֆ Սայբերի դուստրը, շատ հոգսեր էր պատճառում իր հանրաճանաչ մորը: Տասնյոթամյա աղջիկը հրաշալի հիշում էր իր առաջին քայլերը կինոյում՝ «Կարմիր կայսրուհին» (որտեղ խաղացել էր փոքրիկ Եկատերինայի դերը) և «Ալլահի այգին»: Այժմ նա երազում էր հանրահայտություն նվաճել և ազատվել հանրաճանաչ մարդու դատեր նսենացուցիչ վիճակից: Նա այլեւս չէր ուզում գտնվել Մառլենի հսկայական և ամենաթափանց փառքի ստվերում: Կոնֆլիկտը ծավալվեց մի բեմադրիչի հետ Մարիայի ամուսնանալու մտադրության պատճառով: Ամուսնության մասին մոր հետ զրույցը ոչ մի լավ բանի չհանգեցրեց: Մառլենը վրդովվեց: Երբեք: Մարիան շատ է ջահել: Գաբենը խառնվեց կոնֆլիկտին պաշտպանելով խռովարարուհուն, հույս ունենալով, որ իրավիճակը կմեղմացնի: Լրագրողուհի Չեդա Յոփերը, Յուլիուսի ամենաթունոտներից մեկը գրում էր Մառլենի և Մարիայի միջև հակամարտության «որոշ պատճառները» մասին: Մառլենը զայրալից հերքում էր նեմգ ակնարկները: Նա աստվածուհի էր: Իրականում արդյո՞ք նա առաքինի մայր էր՝ դժվար էր ասել: Մի բան է հայտնի. Մառլենը միշտ հպարտությամբ էր բոլորին ցույց տալիս Մարիային, նրան տանում էր նկարահանումների, նրա հետ խցիկի առջև դիրքեր ընդունում: Սակայն Չեդա Յոփերի թունոտ զրպարտանքները խախտեցին Դիտրիխի իսկ ստեղծած մայրական կերպարը: Գաբենը արդեն չէր կարող թաքցնել իր զայրույթը:

Եվրոպան ճակատամարտերի բոցերի մեջ էր, իսկ նա այնքան հեռու էր, ընդամենը «Մեծի երես տվածն» էր և անբանի կյանքով ապրում էր Յուլիուսին: Մի անգամ, երբ գիշերային ակունքի նվազախումբը նրա պատվին նվազում էր «Մարսելյեզը», Գաբենի խռովքն ու ներքին ցավը սահմանին հասան: Մառլենը յուր լցրեց կրակի վրա. որպես Յուլիուսի սեքս-խորհրդանիշի՝ նրա արտասովորությունը, վարքի էմանսիպացվածությունը՝ այս բոլորը չափից ավելի էր, հատկապես՝ այնպիսի մարդու համար, ինչպիսին Գաբենն էր:

Հարունակությունը՝ էջ 11





### Աստղային սեր Մառլեն Դիտրիխ և ժան Գաբեն

սկզբը՝ էջ 10

1942-ի վերջում նա որոշում է թողնել Լահանգները և հրաժեշտ տալ կինեմատոգրաֆին, որպեսզի միանա ֆրանսիական ազատագրական զորքերին: Բայց դա այնքան էլ հեշտ չէր: «Չրաշալի հասկանում ենք Ձեր մտադրությունները,- նրան ասացին «Ֆոքս» ընկերությունում,- բայց առավել լավ կլինի հետևել Ձեր գործընկերների օրինակին, որոնք մասնակցում են նացիզմի դեմ պայքարին՝ ստեղծելով հայրենասիրական ֆիլմեր»:

Սակայն Գաբենը, համենայն դեպս, հասավ իր ուզածին: Ժյուլիեն Դեվիլիերի «Խաբեբան» ֆիլմի աշխատանքներն ավարտվելուց շատ չանցած նա Նյու Յորքում հանդիպեց Ֆրանսիայի ծովային զինված ազատագրական ուժերի ներկայացուցչի հետ և զինվորական ծառայության ընդունվեց: Մառլենը անսփուփ վիճակում էր: Չրաժեշտին Գաբենը նրան երեք նկար նվիրեց՝ Սիսլեյ, Վլամինկ և Ռենուար... Ինչպիսի՞ն էր Մառլենի հրաժեշտի նվերը: Երբ Գաբենը թողեց ամերիկյան մաքսատունը, ինչ-որ փաթեթ՝ «չբեղ նվեր», որի հետ նա մեծ երկուրդությամբ էր վարվում, միջանցքում խոսակցությունների առիթով է, որ դա «աղանաղյա մանյակ է»: 1943 թվականի ապրիլի կեսերին Գաբենը թիկնապահ խմբի նավը բարձրանալու համար Նորֆոլկ նավահանգիստ ներկայանալու հրաման է ստանում: Նրան ուղեկցում է Մառլենը: Նրանք պարզապես ընթրում են ռեստորանում, դիտում Դեմֆրի Բոգարտի մասնակցությամբ պատերազմի մասին կինոնկար և զիջերվա ժամը երկուսին բաժանվում:

Մառլենին թվում է, որ ինքը վշտից մահանում է: Նա մտածել անգամ չի կարող անգլերեն դերեր կատարելու համար Չոլիվուդ վերադառնալու մասին: Նրա հոգին մշտական խռովքի մեջ է, նա շրջում է տանը, որն այսուհետ նրան թվում է անայացած և երկար կանգ է առնում իրենց երջանկության ժամանակների լուսանկարների առջև:

Երեսուն տարի անց Դիտրիխը կասի. «Նա իմ մեջ վառեց մի կրակ, որը երբեք չի հանգչի»: Բայց դերասանուհին չէր պատկանում այն կանանց թվին, որոնք պատրաստ են իրենց թաղել սեփական վշտի մեջ: Անցնելով բոլոր ռազմական ատյանները Մառլենը որոշում է հավաքագրվել ՖԱԲ-ի կանանց բաժնում: Անշուշտ, չնայած հայրենասիրության մասին նրա պերճաշուք ճառերին, այդ բոլորն արվում էր միայն մեկ՝ Գաբենին գտնելու նպատակով: Գնարավոր է, Մառլենին տեսնելու համար Ատլանտիկյան կտրելու միտքը այցելել է նաև Գաբենին: Բայց նա ռազմական հանձնարարությամբ Ավիոնում էր: Դերասանուհու հնարավոր ժամանման մասին լուրը Գաբենի համար անակնկալ չէր. նա հո գիտեր, թե որքան համառ է Մառլենը:

1944 թվականի ծնունդը Դիտրիխը հայտնվեց Բաստոնի համար ճակատամարտի ամենակենտրոնում, այնտեղ, պայթող ռումբերի և խոյրնթաց ինքնաթիռների ոռնոցի մեջ էր նաև Գաբենը: Մի անգամ երեկոյան, «ծովային հրաձիգի սաղավարտի տակ գորշ մազեր» որոնելով, ճակատի գծում շրջելիս՝ Դիտ-



րիխը հանկարծ տեսավ ծանոթ կերպարանքը և ճչաց. «ժա՛ն»: Ինքնակենսագրության մեջ Մառլենը այդ տեսարանը նկարագրել է Չոլիվուդի դրամատիկական ոճով: Իրականում Գաբենը վիատվեց՝ տեսնելով «Մեծին» հանդիպումից այդքան հուզված: «Ի՞նչ գործ ունես այստեղ»,- փնթփնթաց նա:

Երկուսն էլ փառավորված էին: Բայց ժամանակը մի փոքր երերաց և հոսեց նրանցից հեռու... Նահանգներն աստղին հանձնեց ազատագրման համար մեղալ. Ֆրանսիան շնորհեց ասպետի կոչում, հետո՝ Պատվո լեգեոնի հրամանատարի: Գաբենին հանձնվեց պատերազմի մասնակցելու համար խաչ: Բայց այս բոլորը չէր գոհացնում «Մեծին»: Գաբենը չափազանց համեստ է, ֆրանսիացիները չափազանց անտարբեր են, նրանք թերագնահատում են Մառլենի տղամարդու արիությունը և այն ամենը, ինչ նա արեց Գերմանիայում գերության մեջ գտնվող իր հայրենակիցներին օգնելու համար:

Ազատագրված Փարիզում զարմանքով տեսան Գաբենի ճերմակած մազերը: «Դորշը» ֆիլմի երիտասարդ խռովարարը տարիքն առել է ծերացել էր: Նրա համար հետպատերազմյան կինեմատոգրաֆում տեղ չգտնվեց: Գրեթե նույն էր ասվում Մառլենի առնչությամբ, որը պատերազմական սառնամանիքային ծնունդն ստացած ցրտահարությունները բուժելու համար Ամերիկա մեկնելուց հետո Փարիզ էր վերադարձել ժանի մոտ: Նա բնակարան էր վարձել Մոնտաբիա ավենյուլի վրա, որը չլքեց մինչև մահը՝ 1992 թվականի մայիսը: Մառլենի և Գաբենի հարաբերությունները փոխվեցին: Նրանք սկսեցին միմյանց հունորով վերաբերվել: Նրանց մասին հեզմանքով ասում էին. «Տարօրինակ զույգ են». պատերազմում հաղթողը գերմանուհու կողքին. ինչպիսի՞ ստորանք: Բայց ժան Գաբենը համառ էր: Նա համաձայնեց նկարահանվել Մարսել Կառնեի «Գիշերվա դռները» ֆիլմում, բայց այն պայմանով, որ այնտեղ նկարահանվի նաև «Մեծը»: Գործարքը չկայացավ: Դերը հանձնեցին Իվ Մոնտանին: 1946-ին նրանք պատ-

րաստվում էին միասին մասնակցել «Մարտին Ռոմանյակը սնանկանում է» ֆիլմի նկարահանումներին: Մառլենը հետո չարությանը է հիշողություններում մեջբերել ինչ-որ մեկի վճիռը. «ժան Գաբեն և Մառլեն Դիտրիխ անունները դեռևս բավարար չեն հանդիսատեսին գրավելու համար»: Մառլենը ճնշված էր: Գաբենը հանգիստ էր. «Մի քիչ սպասենք»: Մառլենը, որի ֆինանսների վիճակը փոքր-ինչ խարխուլված էր, վերադառնում է Չոլիվուդ «Ոսկե տարիներ» ֆիլմի նկարահանումների համար, որը գործնականորեն ոչինչ չավելացրեց նրա նախկին հաջողություններին: Ի՞նչ էին նրանք իրար ասում ինքնաթիռի շարժասանդուղքի մոտ կանգնած: Գուցե Գաբենը փորձում էր Մառլենին համոզել ամուսնանալ՝ իր հետ: Գաբենն ընտանիք, երեխաներ էր ուզում ունենալ: Երիտասարդության խռովարար հոգին մնացել էր անցյալում: Մառլենը, հնարավոր է, մերժեց նրա առաջարկը: Նա դեռևս չի ամուսնալուծվել Ռուդոլֆ Սայբերից, որին պարբերաբար վստահել է իր կինեմատոգրաֆիական և անձնական գաղտնիքները: Նա պաշտում էր Փարիզը և Ֆրանսիան... բայց պատկանում էր ամբողջ աշխարհին: Երբ Մառլենը ժանին մոտիկ լինելու համար Փարիզ վերադարձավ, նորից իր սիրո ստրուկը դարձավ: Դեռ հուսալով վերաթեքացնել իրենց հարաբերությունների հնայքը՝ նա ցնցման մեջ էր իմանալով, որ Գաբենին նկատել էին դերասանուհի Մարտին Քերոլի հետ: Ժանն աստիճանաբար հեռանում էր Մառլենից, որն իրեն արդեն այնքան անհրաժեշտ չէր: Մի անգամ երեկոյան կաբարետում նրանք պատահաբար կից սեղանների մոտ են նստած լինում: Գնարավորություն չունենալով խուսափել հանդիպումից՝ Գաբենը ողջունում է նրան՝ նստած տեղից վեր բարձրանալով: Եվ ուրիշ ոչինչ: Նա հեռանում է քայլելով ծովայինի իր քայլվածքով, գլուխը չթեքելով և ոչինչ չարտահայտելով իր հայացքով: «Իմ սերը, որը ես պապացուցել եմ նրան, մեծ է և անխախտ»,- ինքն իրեն հավատացնում էր Մառլենը: Նա իսկապես խուճապահար եղավ միայն այն ժամանակ, երբ 1949 թվականի մարտին կարդաց Դոմենիկ Ֆոնտեյի լամպիցի մանեկենուհու հետ Գաբենի ամուսնության մասին, որը հետագայում ժանին տվեց այն, ինչի մասին նա երազում էր երեք երեխա և բնականոն կյանք ցուցադրական շքեղությունից զերծ: Գուցե Մառլենը որոշեց ինչ էլ լինի տեսնել Գաբենի հետ: Մի անգամ նա հետևեց ամուսնական զույգին, և երբ նրանք տեղավորվեցին ռեստորանում, նստեց կողքի սեղանի մոտ՝ հույս ունենալով, որ Գաբենը կխոսի իր հետ: Իսկ նա միտումնավոր իրեն ողջունեց այնքան բարձրաձայն, որ ինքը շփոթվեց: Մի քանի տարի Մառլենը շարունակում էր զանգահարել նրան, բայց նրան այդպես էլ չհաջողվեց ոչ խախտել, ոչ հասկանալ նրա սառցային լռությունը: «Ես նրան կորցրի, ինչպես կորցնում են բոլոր իղեալները»: Գաբենը մահացավ 1976 թվականին: Մառլեն Դիտրիխը, որի ամուսինը կյանքից հեռացել էր փոքր-ինչ վաղ, ասաց. «Ես այրիացա երկրորդ անգամ»:

Թարգմանությունը՝  
Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ



Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՍ «Երեւանի Ն. Աճեմյանի անվան քիմ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ մասնավարժների հետեւյալ թափուր աշխատանքների համար:

ա) Հանրակրթական առարկաներ (հայոց լեզու եւ գրականություն, ֆիզիկա, կենսաբանություն, հանրահաշիվ/երկրաչափություն, անգլերեն լեզու, ռուսերեն լեզու) դասավանդող դասախոսներ:

Մասնավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչ սահմանված պահանջները:

- մասնավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մասնավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

բ) Մասնագիտական առարկաների մոդուլներ դասավանդող դասախոսներ՝

1. «Ապահովագրական գործ» մասնագիտության մոդուլներ («բանկային գործ» (54 ժամ), «արժեթղթերով գործառնություններ» (54 ժամ), «արտարժույթային գործառնություններ» (54 ժամ), «բանկային հաշվարկներ եւ դրամական գործառնություններ» (36 ժամ)):

2. «Սառնարանային տնտեսություն» մասնագիտության մոդուլներ («Սառնագենտային համակարգի խողովակաշարի մոնտաժման հմտություններ» (36 ժամ), «Սառնագենտային համակարգի սարքավորումների մոնտաժման հմտություններ» (54 ժամ), «Սառնագենտային համակարգերի նորոգման հմտություններ» (54 ժամ), «Սառնագենտային համակարգերի շահագործման հմտություններ» (54 ժամ)):

Մասնավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչ սահմանված պահանջները:

- դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղման ընթացքում կրթական չափորոշիչներին համապատասխան գրավոր քննության արդյունքում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չէր ստացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- 1. դիմում(լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն(2եւ 4),
6. մեկ լուսանկար 3X4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից, ժամը 10:00-ից 15:00-ը:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. սեպտեմբերի 9-ին՝ ժամը 11:00-ին, Երեւանի Ն. Աճեմյանի անվան հ. 2 պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական 37Ա:

Քոլեջի մասին առավել մանրամասն՝ n2college.am: Տեղեկությունների համար զանգահարել՝ (+374 10) 67-23-01, (+374 10) 67-24-43 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՍ «Երեւանի զբոսաշրջության, սպասարկման եւ սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում «Հայոց լեզու եւ հայ գրականություն», «Անգլերեն», «Ֆիզիկուլտուրա», «Ինֆորմատիկա», «Մաթեմատիկա», «Տնտեսագիտություն», «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Սպասարկման կազմակերպում», «Զբոսաշրջություն» եւ «Ճանապարհային երթեւեկության կանոններ» առարկաների եւ մոդուլների դասախոսների թափուր տեղերի համար:

Մրցույթին կարող են մասնակցել՝

